26. *Лунеев В.В.* Социально-правовой контроль и предупреждение преступности // Проблемы социальной и криминологической профилактики преступлений в современной России: Материалы всероссийской научно-практической конференции (18–20 апреля 2002г.). Вып. 1. М., 2002. С. 150.
27. *Бородин С.В., Лунеев В.В.* О криминологической экспертизе законов и иных нормативных актов // Государство и право. 2002. № 6. СС. 40–45.
28. *Габузян А.А.* Проблемы преступности в Республике Армения. Ер., 2007. С. 228.
29. *Арутюнян В.А.* Предупреждение преступности как криминологическая проблема. Ер., 2004. С. 5.

ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹՈՒՄ

Լ.Զ. Թադևոսյան, Զ.Ա. Թադևոսյան

Հայ-ռուսական/Սլավոնական/ համալսարան

Ինչպես փորձագետի եզրակացությունը, այնպես էլ քրեական գործով ձեռք բերված մյուս ապացույցները չունեն նախապես հաստատված ապացուցողական ուժ և նշանակություն: Բոլոր ապացույցները՝ այդ թվում նաև փորձագետների եզրակացությունները, վարույթն իրականացնող անձինք պետք է գնահատեն քննադատաբար: Փորձագետի եզրակացությունը գնահատելիս այն պետք է համեմատվի քրեական գործով ձեռք բերված այլ ապացույցների հետ, և այդ կապակցությամբ միայն կարելի կլինի հանգել վերջնական համոզիչ հետևության:

Սակայն, ինչպես ցույց է տալիս դատական պրակտիկական քրեական գործերի ուսումնասիրությունները, որոնցով նշանակված են եղել դատական փորձաքննություններ, վարույթն իրականացնող մարմինները դատական փորձաքննություններին տալիս են առաջնային նշանակություն, կարևոր դեր, շատ հաճախ անվիճելի ապացույցի գնահատական: Օրինակ՝ դատաավտոտեխնիկական փորձաքննությունը, ավտոտրանսպորտային հանցագործությունների գործերով, դատահոգեբուժական և դատահոգեբանական փորձաքննությունները՝ անձի կյանքի, առողջության դեմ ուղղված ծանր հանցագործությունների վերաբերյալ գործերով, դատաբժշկական փորձաքննությունները՝ սեռական անձեռնմխելիության, սեռական ազատության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ գործերով, բնապահպանական փորձաքննությունները՝ շրջակա միջավայրի անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ գործերով և այլն: Այդ հանցանքների վերաբերյալ հարուցված քրեական գործերով նշանակված փորձա-

քննությունների եզրակացություններին կարծես թե տրվում է «ապացույցների թագուհու» կարգավիճակ, որը մեր կարծիքով ոչ միայն անթույլատրելի է, այլև կարող է առաջ բերել մի վիճակ, որ միայն փորձագետի եզրակացության վրա հիմնվելով՝ դատարանը արձակի չպատճառաբանված դատական ակտ: Կարծում ենք, որ դատարանը նման հանցագործությունների վերաբերյալ գործերով ստացված դատական փորձաքննությունների եզրակացություններն ոչ միայն պետք է խորը ու մանրակրկիտ վերլուծության ենթարկի, ընկալի դրանց իմաստն ու բովանդակությունը, վերլուծի ու անկողմնակալ գնահատի այն, այլև խորը ու բազմակողմանի ուսումնասիրության արդյունքում և քրեական գործով ձեռք բերված այլ ապացույցների համադրությամբ միայն դրանց տա գնահատական ու ճանաչի որպես ապացույց և դնի դատական ակտի կայացման հիմքում:

Բացի նշվածից, դատարանը դատական ակտ ընդունելիս չպետք է հենվի փորձագիտական այն եզրակացության վրա, որը կրում է ենթադրության բնույթ, հենված է գիտական ոչ ճիշտ ու հանրաճանաչ հետազոտության վրա, տեղիք է տալիս փորձաքննությունն և դրա ճշմարտացիության մեջ կասկածելու, չի բխում տվյալ փորձագետի նեղ մասնագիտական գիտելիքներից կամ հիմնված է այնպիսի հետազոտությունների վրա, որոնք չեն անցել համապատասխան փորձարկում և չեն արժանացել համընդհանուր ճանաչման գիտական հաստատությունների ու գիտական կենտրոնների կողմից, կամ եթե փորձաքննություն կատարողները չունեն հետազոտությանը համալիր գնահատական տալու արտոնություն կամ եզրակացությունը տրված է ժամանակակից գիտական պատկերացումներին հակասող մեթոդների կիրառմամբ, կամ փորձագիտական եզրակացությունը տրված է այնպիսի օբյեկտի առնչությամբ, որը ձեռք է բերվել անհայտ կամ դատական նիստում չբացահայտված աղբյուրից, կամ այնպիսի նյութերի հիման վրա է տրվել եզրակացություն, որոնք ձեռք են բերվել բռնությամբ, սպառնալիքով, խաբեությամբ, այլ անօրինական գործողություններով, դատավարության մասնակիցների պաշտպանության իրավունքի և այլ երաշխիքների էական խախտմամբ, քննչական կամ դատավարական

գործողությունների կատարման կարգի էական խախտումներով և այլն:

Այս ամենը պայմանավորված է այն հանգամանքով, որ գիտության, տեխնիկայի, արվեստի ու արհեստի որևէ բնագավառում կուտակված փորձի հիման վրա ստացված ինչ-որ արդյունք դեռևս հեռու է բավարար համարվելուց և քրեական գործով ապացույց ճանաչվելուց, քանի դեռ այդ կապակցությամբ չկան հեղինակավոր մասնագետների ու գիտահետազոտական կենտրոնների հետևությունները:

Եթե քրեական գործերով նշանակված փորձաքննություններով ստացվել են տարբեր հակասական եզրակացություններ, մեր կարծիքով նպատակահարմար է նշանակել երրորդ փորձաքննությունը՝ վերջնական պատասխան ստանալու նպատակով: Սակայն նման պարագաներում չեն բացառվում այն դեպքերը, երբ երկու իրար հակասող փորձագիտական եզրակացություններից միայն մեկի վրա հենվի դատարանը և արձակի դատական ակտ: Նման պարագայում կարծում ենք, որ դատարանը պարտավոր է գնահատական տալ ու դասել ապացույցների շարքին ոչ միայն այն եզրակացությունը, որն իր կարծիքով հավաստի ու համոզեցուցիչ է, այլև պարտավոր է հիմնավոր պատճառաբանություններ բերել ու հերքել, թե ինչով է երկրորդ եզրակացությունը ոչ հիմնավոր, որն է դրա թերությունը, որի պատճառով այն չի ճանաչվում որպես ապացույց:

Քրեական գործերով, որպես կանոն, փորձագիտական եզրակացության տվյալները, եթե չեն հակասում այլ ապացույցներին, չեն կարող կասկածանքի տեղիք տալ, չնայած որ միայն փորձագիտական եզրակացության հիման վրա կայացված դատավճիռը նույնպես կարող է համարվել օրինական, եթե այն գտնվում է մյուս ապացույցների հետ ակնհայտ հակասության մեջ: Այնպես որ չկա մեկ կանխորոշիչ չափանիշ ասելու, որ այս կամ այն ապացույցը կարող է դառնալ անվիճելի, հիմնարար ու դրվի դատական ակտի հիմքում, իսկ մյուսները զուրկ են այդ դերից:

Փորձագիտական եզրակացության կամ քրեական գործով ձեռք բերված այլ ապացույցների ապացուցողական նշանա-

կուրծունը և դրանցից որևէ մեկին առաջնային դեր տալը յուրաքանչյուր անգամ լուծում է դատարանը՝ հաշվի առնելով գործի կոնկրետ հանգամանքները:

Փորձագիտական հետազոտությունն այն առանձնահատկությունն ունի, որ կատարվում է հատուկ մասնագիտական գիտելիքների օգտագործմամբ, նպատակաուղղված է հայտնաբերելու, հետազոտելու և գնահատելու օբյեկտի հատկանիշները, որոնք ապացուցողական նշանակություն կունենան ապացուցման գործընթացում: Փորձագիտական եզրակացությունը չի կարող ամփոփվել միայն հայտնաբերված օբյեկտի հետազոտմամբ, որը ձեռք է բերվել համապատասխան դատավարական ընթացակարգերի պահպանմամբ: Երբ փորձագիտական հետազոտության ընթացքում բացահատված փաստերը (օբյեկտները) ուսումնասիրվում, գնահատվում են գիտության, տեխնիկայի, արվեստի ու արհեստի որևէ բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներով օժտված մասնագետի կողմից և ձևակերպվում են դատավարական հատուկ փաստաթղթում՝ փորձագիտական եզրակացության մեջ, ապա միայն այդ ժամանակ են դրանք քրեական գործով ձեռք բերում ապացույցի կարգավիճակ:

Ասվածը կարևորվում է փորձագետի և մասնագետի գործունեության փոխհարաբերությունները գնահատելիս և նրանց դերը հստակեցնելու առումով:

Փորձագետն այն անձն է, որը տիրապետում է մասնագիտական գիտելիքների և նշանակվում է վարույթն իրականացնող մարմնի կողմից քրեական դատավարության օրենսգրքի պահանջներին համապատասխան փորձագիտական եզրակացություն տալու համար՝ գիտության, տեխնիկայի, արհեստի և արվեստի որևէ բնագավառում ունեցած իր գիտելիքների օգտագործմամբ որևէ օբյեկտի ուսումնասիրություն կատարելու համար: Փորձագետի եզրակացությունը, համաձայն նշված հոդվածի 1-ին մասի, իրենից ներկայացնում է այն հարցերի պատասխանները, որոնց հանգել է փորձագետը հետազոտություն կատարելիս: Որպեսզի փորձագետի եզրակացությունը համարվի ապացույց, այն պետք է բավարարի մի շարք պայմանների:

ա) Դատական փորձաքննությունը պետք է նշանակվի կոնկրետ քրեական գործի վարույթի ընթացքում:

բ) Դատական փորձաքննությունը պետք է նշանակվի այն մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից, ում վարույթում գտնվում է քրեական գործը:

գ) Փորձաքննությանը պետք է ներկայացվեն բավարար քանակի ելակետային տվյալներ, օբյեկտներ, որոնցով հնարավոր կլինի փորձաքննություն կատարել:

դ) Դատական փորձաքննություն կատարելիս պետք է հետազոտությունները խարսխվեն գիտականորեն հիմնավորված մեթոդների վրա:

ե) Փորձաքննության արդյունքները պետք է պատշաճ ձևակերպում ստանան:

զ) Փորձաքննության նշանակման, կատարման ընթացքը և դրա արդյունքների ծանոթացումը պետք է ապահովեն այն անձանց իրավունքները, որոնք ընդգրկված են քրեական գործի վարույթում¹:

Փորձագետի եզրակացությունը՝ որպես քրեական դատավարության կարևորագույն փաստաթուղթ, պետք է բավարարի մի շարք պահանջների, որոնք նշված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 250-րդ հոդվածում (ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի 204-րդ հոդված): Փորձագետի եզրակացության մեջ պետք է նշված լինի՝ երբ, որտեղ, ում կողմից (նախաձեռնողի անունը, ազգանունը, հայրանունը, պաշտոնը, կոչումը), փորձաքննության մասին որոշման կայացման ամիսը, ամսաթիվը, տարեթիվը, փորձագետի մասնագիտությունը, կրթությունը, աշխատանքի վայրը, մասնագիտական ստաժը, գիտական աստիճանը, կոչումը, զբաղեցրած պաշտոնը, որ քրեական գործի նյութերի հիման վրա է կատարվել փորձաքննությունը, ինչպիսի օբյեկտներ (նյութեր) են ներկայացվել փորձաքննությանը, դրանց նկարագրությունը, ձեռք բերման աղբյուրները, այն արձանագրությունները (դատավարական

¹ Տե՛ս *А.В. Гриненко*, Комментарий к уголовно-процессуальному кодексу РФ, Изд-во «Эксмо», М., 2006, էջ 254–255:

փաստաթղթերը), որոնցում նշված են այդ ապացույցների հայտնաբերման հանգամանքները, փորձաքննության մասնակիցների տվյալները, ովքեր են մասնակցել փորձաքննությանը, նրանց անունները, ազգանունները, կրթությունը, աշխատանքի ստաժը, գիտական կոչումը, գիտական աստիճանը, քրեական գործի որ նյութերն ու ապացույցներն են հետազոտվել փորձաքննության ժամանակ, հետազոտվող օբյեկտի նկարագիրը, ինչպիսի նմուշներ են հետազոտվել, ինչպիսի հետազոտություններ են կատարվել, ինչպիսի մեթոդներ և տեխնիկական միջոցներ են կիրառվել հետազոտության ընթացքում, առաջադրված հարցերի հիմնավոր պատասխանները, գործի համար նշանակություն ունեցող այն հանգամանքները, որոնք պարզվել են փորձագետի նախաձեռնությամբ: Եթե փորձագետը հետազոտության ընթացքում հանդես է եկել նախաձեռնող մարմինների առջև միջնորդությամբ փորձաքննությանը լրացուցիչ նմուշներ կամ օբյեկտներ ներկայացնելու համար, ապա եզրակացության մեջ պետք է նշվի դրա և միջնորդությամբ պահանջված համապատասխան օբյեկտների, նմուշների լրիվության մասին, և եթե միջնորդությունը թերի է բավարարվել, ապա այդ մասին՝ նույնպես:

Նշենք, որ ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի բովանդակության համաձայն, փորձագետի «եզրակացությունը և ցուցմունքը» բառակապակցության տակ պետք է հասկանալ այն վիճակը, որ փորձագետի հարցաքննության արձանագրությունն ինքնուրույն ապացույց չէ, այլ այն ապացույցի տեսք է ընդունում միմիայն եզրակացության հետ, որովհետև հիմքը փորձագետի եզրակացությունն է, և շատ հաճախ դատական պրակտիկայում անհրաժեշտություն չի ծագում փորձագետից ցուցմունք վերցնել, հետևաբար փորձագետի եզրակացությունը բավարար ապացույց է դատական ակտի հիմքում դնելու համար, իսկ եթե եզրակացության առանձին դրույթներ, տերմիններ, հասկացություններ պարզ չեն վարույթն իրականացնող մարմինների կամ դատավարության մասնակիցների համար, ապա անհրաժեշտություն է ծագում դրանց պարզաբանման համար հարցաքննել փորձագետին տրված եզրակացության շուրջ: Եզրակացությունից դուրս փորձագետին հար-

ցաքննել ու ստանալ ինչ-որ պատասխաններ անթույլատրելի է, և, որպես կանոն, փորձագետի հարցաքննությունը կատարվում է բացառապես գրավոր եզրակացությունը ստանալուց հետո: Թեև ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը ապացույցների թվարկման մեջ հատուկ չի նշում փորձագետի ցուցմունքն որպես ապացույց, այդուհանդերձ 252-րդ հոդվածում հնարավոր է համարում փորձագետի եզրակացությունը բավարար չափով պարզ չլինելու դեպքում հարցաքննել փորձագետին: Ինչպես ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը (252-րդ հոդվածի 2-րդ մաս), այնպես էլ ՌԴ քրեական դատավարության օրենսգիրքը (205-րդ հոդվածի 1-ն մաս) փորձագետի հարցաքննությունը անթույլատրելի են համարում մինչև փորձագետի կողմից գրավոր եզրակացության տալը: Այս պահանջի էությունը կայանում է նրանում, որ առկա պետք է լինի փորձագետի եզրակացություն, որում նշված առանձին հանգամանքներ, ձևակերպումներ, հսկացություններ, տերմիններ անհասկանալի լինեն նախաձեռնող մարմնի և դատավարության մասնակիցների համար, որոնց պարզաբանման նպատակով միայն հնարավոր կլինի հարցաքննել փորձագետին:

Այլ հարց է մասնագետի եզրակացությունը ու նրան հարցաքննելու մասին ցուցմունքը որպես ապացույց համարելու մասին ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի բովանդակությունը:

Վերը նշեցինք, որ փորձագետի հարցաքննությունը պետք է կատարվի այն հարցերի շուրջ և այն հետևությունների մասին, որոնք տրված են փորձագետի գրավոր եզրակացության մեջ: Այս շրջանակից վարույթն իրականացնող անձը դուրս գալու իրավունք չունի. հակառակ դեպքում ստացված տվյալները չեն կարող համարվել ապացույց:

Եթե փորձագետի կողմից տրված գրավոր եզրակացության ուսումնասիրության ընթացքում վարույթն իրականացնող անձի մոտ առաջանում է լրացուցիչ հարցեր տալու անհրաժեշտություն կամ անհրաժեշտություն է առաջանում պարզաբանել լրացուցիչ հանգամանքներ, կամ եթե նա համաձայն չէ փորձագետի եզրակացության հետ՝ վերջինիս ոչ բավարար չափով

պարզ լամ լրիվ լինելու պատճառաբանությամբ, ապա նշանակվում է լրացուցիչ դատական փորձաքննություն, որի առթիվ կայացվում է լրացուցիչ դատական փորձաքննություն նշանակելու մասին որոշում:

Լրացուցիչ փորձաքննություն նշանակելիս վարույթն իրականացնող մարմինը փորձագետի առջև կարող է դնել նոր հարցեր, որոնք սկզբնական փորձաքննություն նշանակելու մասին որոշման մեջ ընդգրկված չեն եղել: Այդ նոր հարցերը որպես կանոն տրվում են փորձագետին՝ սկզբնական փորձաքննության եզրակացության մեջ առաջադրված հարցերի պատասխանների մեջ հստակություն, ճշգրտումներ մտցնելու նպատակով և նոր պատասխաններ ստանալու ակնկալիքով, որը կարող է քրեական գործի լուծման համար ունենալ որոշակի նշանակություն: Լրացուցիչ փորձաքննության կատարումը հանձնարարում են փորձագետին կամ փորձագիտական հիմնարկին, որտեղ կատարվել է սկզբնական փորձաքննությունը, թեև օրենքը չի բացառում այն դեպքերը, երբ լրացուցիչ փորձաքննություն նշանակվի այլ փորձագետի (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 251-րդ հոդվածի 1-ին մաս): Եթե սկզբնական փորձագիտական եզրակացության մեջ պատասխանները ոչ հստակ են կամ որոշակի պարզաբանման կարիք ունեն, որոնց կապակցությամբ անհրաժեշտություն է առաջացել լրացուցիչ փորձաքննության ու ակնկալվում է ստանալ նոր պատասխաններ, սկզբնական փորձաքննության եզրակացության տվյալները չեն կորցնում իրենց ապացուցողական նշանակությունը, չեն դադարում ապացույց լինելուց. պարզապես լրացուցիչ փորձաքննությամբ սկզբնական փորձաքննության արդյունքները դառնում են ավելի հստակ ու ընկալելի ինչպես վարույթն իրականացնող մարմինների, այնպես էլ դատավարության կողմերի համար:

Դատական պրակտիկայում չեն բացառվում դեպքերը, թեև դրանք համեմատաբար ավելի հազվադեպ են, երբ փորձագետի եզրակացության՝ վարույթն իրականացնող մարմնի պաշտոնատար անձի կողմից իրականացված հետազոտման ու գնահատման ընթացքում առաջանան կասկածներ փորձագիտական

Եզրակացության հիմնավորվածության մասին, կամ ապացույցները, որոնց վրա հիմնված է եզրակացությունը, ճանաչվեն ոչ հավաստի կամ պարզվի, որ խախտվել են փորձաքննության կատարման դատավարական կանոնները կամ փորձաքննության եզրակացությունը էական հակասությունների մեջ է քրեական գործով ճանաչված այլ ապացույցների հետ համեմատելիս. այդ կասկածները, անհավաստիությունները, դատավարական կանոնների խախտումները, էական հակասությունները վերացնելու նկատառումներով նշանակվում է կրկնակի փորձաքննություն (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 251-րդ հոդվածի 2րդ մաս):

Լրացուցիչ փորձաքննությունը, որպես կանոն, նշանակվում է, ինչպես նշեցինք վերևում, նույն փորձագետին, սակայն չի բացառվում դրա կատարումը հանձնարարել մեկ այլ փորձագետի: Այլ է խնդիրը կրկնակի փորձաքննություն նշանակելու հարցում:

Որպես կանոն կրկնակի փորձաքննություն նշանակվում է այլ փորձագետների և այլ փորձագիտական հիմնարկի՝ փորձագիտական եզրակացության օբյեկտիվությունը ապահովելու նպատակով: Կրկնակի փորձաքննությունը կարևորվում է նրանով, որ այդտեղ շոշափվում է սկզբնական փորձաքննություն կատարած փորձագետի և հիմնարկի մասնագիտական կարողությունների աստիճանը, փորձաքննության եզրակացության օբյեկտիվությունն ու հիմնավորվածությունը և փորձագիտական եզրակացության շուրջ կասկածների փարատման կարևորությունը: Դրա պատճառով վարույթն իրականացնող պաշտոնատար անձը պարտավոր է կրկնակի փորձաքննություն նշանակելու մասին որոշման մեջ պատճառաբանել, թե ինչով է սկզբնական փորձաքննությունը կասկածներ հարուցել, ինչու է եզրակացությունը ճանաչվել ոչ հավաստի, որ հարցերում կամ ինչի կապակցությամբ են խախտվել փորձաքննության կատարման դատավարական կանոնները, և նոր միայն նշանակել կրկնակի փորձաքննություն:

Կրկնակի փորձաքննությունը միաժամանակ փորձություն է սկզբնական փորձաքննությունը տվող հիմնարկի մասնագետի

և փորձագիտական հիմնարկի հեղինակության փորձարկման առումով: Դրա համար վարույթն իրականացնող մարմնի պաշտոնատար անձը և դատավարության մասնակիցները պետք է բերեն հիմնավոր փաստարկներ սկզբնական փորձաքննության եզրակացության հետ համաձայն չլինելու մասին և պատճառաբանեն դրանք: Կրկնակի փորձաքննության եզրակացությունը ամբողջովին կարող է հակասել սկզբնական փորձաքննության և լրացուցիչ փորձաքննության արդյունքներին կամ կարող է ամբողջովին կրկնել սկզբնական և լրացուցիչ փորձաքննությունների բովանդակությունը: Նման պարագայում վարույթն իրականացնող մարմնի պաշտոնատար անձը փորձաքննությունները գնահատելիս և որպես ապացույց ճանաչելիս պարտավոր է հիմնավորել, թե ինչու որպես ապացույց ճանաչել է սկզբնական և լրացուցիչ փորձաքննության արդյունքը, իսկ կրկնակին՝ ոչ, կամ՝ հակառակը: Իսկ եթե սկզբնական փորձաքննություններն իրոք կատարվել են փորձաքննության կատարման դատավարական կանոնների խատմամբ, ապա սկզբնական և լրացուցիչ փորձաքննության արդյունքները չեն կարող ոչ մի պարագայում ճանաչվել որպես ապացույց: Այդպիսի մոտեցում պետք է դրսևորվի և այն դեպքերում, եթե սկզբնական և լրացուցիչ փորձագիտական եզրակացությունները ճանաչվել են ոչ հավաստի:

Ի տարբերություն ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի 74-րդ հոդվածի 2-րդ մասի 3.1. կետի (այս կետը մտցված է ՌԴ 2003թ. հուլիսի 4-ի N 92-Փ 3 օրենքով), որտեղ մասնագետի եզրակացությունն ու ցուցմունքը թվարկված է ապացույցների ցանկում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 104-րդ հոդվածում, որտեղ թվարկված են ապացույցների տեսակները, մասնագետի եզրակացության և նրա ցուցմունքի մասին՝ որպես ապացույցի, հիշատակում ընդհանրապես չկա:

Մասնագետի եզրակացությունը, ինչպես և փորձագետի եզրակացությունն այն գրավոր հետևություններն են, որոնք տրված են դատավարության կողմերի՝ պաշտպանության ու մեղադրանքի և վարույթն իրականացնող մարմինների կողմից կայացված որոշումների հարցադրումների հիման վրա:

Մասնագետը՝ ի տարբերություն փորձագետի, քրեական դատավարությունում նպատակ է հետապնդում մասնագիտական գիտելիքների օգտագործմամբ վարույթն իրականացնող մարմինն օգնելու, աջակցելու, դեպքի վայրից, որտեղ վարույթն իրականացնող մարմիններն անցկացնում են խուզարկություններ, առգրավումներ, տեղագնություններ և այլն հայտնաբերելու ու համապատասխան դատավարական փաստաթղթերում ձևակերպելու որոշակի հանցանշաններով օժտված իրեր և առարկաներ, որոնք հետագայում կարող են ճանաչվել որպես իրեղեն ապացույցներ, քանի որ մասնագիտական գիտելիքների օգտագործմամբ միայն հնարավոր է հայտնաբերել ու վերցնել այն անհրաժեշտ փաստերն ու օբյեկտները, որոնք հետագոտվելուց հետո քրեական գործի համար կարող են դառնալ ապացույցներ: Մասնագետը՝ այդ գործողությունները կատարելուց զատ, իրականացնում է մասնագիտական հետազոտություն և տալիս գրավոր եզրակացություն:

Թեև մասնագետի եզրակացությունը, առավել ևս ցուցմունքը, չի կարող փոխարինել փորձագետի եզրակացությանն ու ցուցմունքին, այդուհանդերձ այն օգտակար գործունեություն է և հնարավորություն է ընձեռում օպերատիվ կերպով իրականացնել մասնագիտական գործունեությունը՝ նպատակ հետապնդելով ապացուցողական նշանակության փաստեր ավելի արագ ձեռք բերելու համար:

Փորձագիտական եզրակացությունը, որպես կանոն, կատարվում է ավելի ամբողջական ու հետազոտվող օբյեկտների ավելի հանգամանակից, խորը ուսումնասիրման հիման վրա, ինչպես գիտության, այնպես էլ տեխնիկայի, արվեստի ու արհեստի որևէ բնագավառի շուրջ ծագած հարցերի շուրջ ավելի մանրակրկիտ, ինչպես նաև մասնագիտական հմտությունների, փորձի, այնպես և գիտության, տեխնիկայի հանրաճանաչ մեթոդների կիրառմամբ:

Դատավարության կողմերը և վարույթն իրականացնող մարմինները մասնագետին հարցերը տալիս են գրավոր և նրանից գրավոր պատասխաններ ստանալու իրավունք ունեն: Կարծում ենք, որ մասնագետի պատասխանները պետք է համապա-

տասխանեն այն պահանջներին, որոնք ներկայացվում են փորձագիտական եզրակացությանը: Նշված հանգամանքը, կարծում ենք, պայմանավորված է նրանով, որ այս երկու տեսակ ապացույցները, ինչպես և քրեական գործով ձեռք բերված այլ ապացույցները մեկը մյուսի նկատմամբ առավելություն չունեն, այլ ուղղակի բոլորը պետք է ձեռք բերվեն, կցվեն քրեական գործին, հետազոտվեն ու ստանան իրենց գնահատականը վարույթն իրականացնող մարմնի կողմից՝ քրեական դատավարության օրենսդրության դրույթներին խիստ համապատասխան:

Մասնագետի ցուցմունքն առանձին ապացույց հանդիսանալ չի կարող: Այն ապացուցողական նշանակություն կարող է ձեռք բերել միայն ու բացառապես մասնագետի գրավոր եզրակացությունը ստանալուց հետո այն գնահատելիս, որովհետև ցուցմունքի անհրաժեշտությունն առաջանում է միմիայն եզրակացության առանձին դրույթների ոչ հստակության, տերմինների բարդության կամ մասնագիտական ձևակերպումների ոչ հստակության պատճառով:

Կարծում ենք՝ նպատակահարմար է, որպեսզի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում կատարվեն լրացումներ և մասնագետի եզրակացությունն ու ցուցմունքը համարվեն որպես ապացույց և թվարկվեն ապացույցների շարքում: Օրենսդրական նման փոփոխությունը կբխեր քրեական գործի քննության շահերից, քրեական գործի լուծումը կընթանար արագ, կձերբազատեր վարույթն իրականացնող մարմնին «ծանրակշիռ» փորձաքննություններ նշանակելուց, որը ոչ միայն կարող է պատճառ հանդիսանալ քրեական գործի քննության ձգձգմանը /քանի որ դատական պրակտիկայում փորձաքննություն կատարելու վրա շատ ժամանակ է ծախսվում/, այլև կլիներ ոչ աշխատատար ու ոչ ծախսատար:

ՌԴ քրեական դատավարության օրենսդրությունը չի անդրադառնում այն հարցին, թե ինչպես վարվել, երբ մասնագետի եզրակացությունը տրված հարցերի շուրջ կրել է ոչ լրիվ հստակ բնույթ, կամ նոր հարցեր են առաջացել տրված հարցերի պատասխանները գնահատելու ժամանակ, կամ եթե տրված եզրակացությունը կասկած է հարուցում, կամ այն ապացույց-

ները, որոնց վրա հիմնված է մասնագետի եզրակացությունը, ճանաչվել են ոչ հավաստի, կամ խախտվել են մասնագիտական հետազոտության կատարման համար նախատեսված քրեական դատավարության օրենսգրքի պահանջները:

Կարծում ենք, որ նման հիմքերի առկայության դեպքում պետք է նշանակվի ոչ թե լրացուցիչ կամ կրկնակի մասնագիտական ստուգում, այլ՝ սկզբնական դատական փորձաքննություն պարզաբանելու համար այն հարցերը, որոնք առաջացել են մասնագետի եզրակացությունը գնահատելուց հետո կամ որոնք չեն փարատվել մասնագետի հարցաքննությունից հետո: Իսկ եթե մասնագետի եզրակացության վերը նշված թերությունների ու խախտումների շտկման նպատակով նշանակված սկզբնական դատական փորձաքննությունը կպարունակի անհասկանալի դրույթներ կամ դրա հավաստիությանը ու օբյեկտիվությունը կասկած կհարուցի, կամ ձեռք բերված կլինի դատավարական կանոնների խախտումներով, ապա պետք է նշանակվի լրացուցիչ կամ կրկնակի դատական փորձաքննություն՝ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կանոններին համապատասխան:

**ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ
ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Զ.Ա. Թադևոսյան

Հայ-ռուսական/Սլավոնական/ համալսարան

Արոշակի հետաքրքրություն է ներկայացնում այն հարցը, թե արդյոք «Շրջակա միջավայրի վրա ազդեցության մասին» Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 1995թ. նոյեմբերի 20-ին ընդունված ՀՀ օրենքի¹ կանոնների պահպանմամբ իրականացված փորձաքննության արդյունքները կարող են ապացույց համարվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի ապացույցներին ներկայացվող պահանջներին համապատասխան:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ հետազոտության նպատակն է կանխորոշել, կանխարգելել կամ նվազեցնել կամ նվազագույնի հասցնել հայեցակարգերի և նախաձեռնվող գործունեության վնասակար ազդեցությունը մարդու առողջության, շրջակա միջավայրի, տնտեսական և սոցիալական բնականոն զարգացման վրա:

Հոդվածի 2-րդ մասը նշում է, որ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննությունը ելնում է

ա) առողջության, բնականոն ապրելու և ստեղծագործելու համար բարենպաստ շրջակա միջավայր ունենալու իրավունքից,

բ) բնական պաշարների արդյունավետ համալիր և բնականոն օգտագործման պահանջներից,

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության էկոլոգիական իրավունք, «Իրավական ակտերի ժողովածու» Եր., 2009, էջ 49–58:

գ) էկոլոգիական համակարգերի հավասարակշռության և բնության մեջ գոյություն ունեցող բույսերի ու կենդանիների բոլոր տեսակների պահպանման անհրաժեշտությունից՝ նկատի ունենալով ներկա և ապագա սերունդների շահերը:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննությունը հիմնվում է գիտական հիմնավորվածության, օրինականության և որոշումների հրապարակայնության սկզբունքի վրա:

Նշված օրենքը թվարկում է փորձաքննության հետևյալ խնդիրները՝

ա) վերլուծել նախատեսվող գործունեության հայեցակարգերի և դրանց այլընտրանքների հնարավորությունը և նպատակահարմարությունը՝ հաշվի առնելով էկոլոգիական բոլոր սահմանափակումները,

բ) գնահատել նախատեսվող գործողության հայեցակարգը և դրանց այլընտրանքների հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի վրա և վտանգավորության աստիճանը,

գ) ստուգել շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործողության հայեցակարգի և դրանց այլընտրանքների հնարավոր էկոլոգիական ազդեցության աստիճանը, հետևանքների վերլուծման ամբողջականությունը և ստույգությունը, այդ հետևանքների կանխարգելման, վերացման կամ նվազեցման համար նախատեսված միջոցների բովանդակությունը ինչպես շահագործման և իրականացման գործընթացում, այնպես էլ արտակարգ իրավիճակների ժամանակ,

դ) ապահովել բնական պաշարների արդյունավետ բնական օգտագործումը,

ե) արգելել շրջակա միջավայրի անդառնալի վտանգավոր ազդեցություն ունեցող ցանկացած նախաձեռնող գործունեություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» օրենքը տալիս է գործունեության այն տեսակները, որոնցով պետք է պարտադիր նշանակվեն բնապահպանական փորձաքննություններ. դրանց թվում նշվում են էներգետիկայի, լեռնային արդյունաբերության, քիմիական, շինանյութերի արդյունաբերության, էլեկտրոտեխնիկական մետալուր-

գիայի, ռադիոէլեկտրոնային արտադրության, փայտի և թղթի արտադրության, թեթև, սննդի արդյունաբերության, ձկնային տնտեսության, քաղաքաշինության, քաղաքային տնտեսության (օրինակ՝ կեղտաջրերի մաքրման կայանների պահպանման), թափոնների օգտագործման, բնության պահպանման, գյուղատնտեսության, անտառային տնտեսության, ջրային տնտեսության ենթակառուցյունների և սպասարկման ոլորտները:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 114-րդ հոդվածի՝ փորձագետի եզրակացությունը գիտության, տեխնիկայի, արվեստի ու արհեստի որևէ բնագավառում հատուկ գիտելիքների օգտագործմամբ գրավոր հիմնավորված հետևություններն են փորձագետին առաջադրված հարցերի, ինչպես նաև իր իրավասությունների մեջ մտնող այն հանգամանքների վերաբերյալ, որոնց նա հանգել է գործի համապատասխան նյութերը հետազոտելիս: Ինչպես նկատում ենք նշված հոդվածի բովանդակությունից, ապացույց կարող է հանդիսանալ միմիայն փորձաքննության արդյունքների հիման վրա փորձագետի կողմից գրավոր տրված եզրակացությունը: Իսկ փորձագետը քրեական գործով չշահագրգռված այն անձն է, որին քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ կամ փորձաքննությունն ընդհանրապես մասին որոշման համապատասխան նշանակում է փորձագիտական հիմնարկի ղեկավարը՝ գիտության, տեխնիկայի, արվեստի և արհեստի որևէ բնագավառում իր հատուկ մասնագիտական գիտելիքների օգտագործմամբ գործի նյութերը հետազոտելու և դրա հիման վրա եզրակացություն տալու նպատակով:

Ի տարբերություն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նշված հոդվածի՝ ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածը, որտեղ խոսքը գնում է փորձագիտական եզրակացության և փորձագետի ցուցմունքի մասին, ուղղակի նշում է, որ փորձագետի եզրակացությունը համարվում է ապացույցի տեսակ, եթե այն ներկայացված է փորձագետի կողմից գրավոր իրեն՝ մասնագետին, քրեական գործով վարույթն իրականացնող մարմնի կամ դատավարության կողմերի առաջադրված հարցերի շուրջ:

Ինչպես պարզ երևում է հոդվածի բովանդակությունից, խոսքը գնում է այն մասին, որ փորձագիտական եզրակացությունը կարող է ստացվել միմիայն հատուկ մարմինների՝ քրեական գործով վարույթն իրականացնող պաշտոնատար անձանց (քննիչ դատարան) դատավարության կողմերի առաջադրված հարցերի շուրջ. հետևաբար, եթե փորձաքննությունը կատարվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» օրենքի դրույթների հիման վրա, այն չի կարող քրեական գործով վարույթն իրականացնող մարմնի կողմից ճանաչվել որպես ապացույց: Այս առումով կարող ենք շեշտել, որ ավելի հաջողված է ՌԴ քրեական դատավարական օրենսգրքի շարադրությունը, որտեղ հստակ նշված է՝ փորձագետի եզրակացությունն որպես ապացույց կարող է ճանաչվել, եթե այն տրված է վարույթն իրականացնող մարմինների կամ դատավարության կողմերի հարցադրումների հիման վրա:

Դատական փորձաքննության տարբերակիչ առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ, որպես կանոն, հրավիրված փորձագետը նախազգուշացվում է ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով սահմանված քրեական պատասխանատվության ենթարկվելու մասին ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար, իսկ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության մասին» փորձաքննության դեպքում համապատասխան մասնագետները չեն նախազգուշացվում քրեական պատասխանատվության մասին:

Դատական փորձաքննության նշանակման և իրականացման պայմաններից մեկն էլ այն է, որ այն, որպես կանոն, կատարվում է փորձագիտական հիմնարկներում կամ վարույթն իրականացնող պաշտոնատար անձի հատուկ որոշման հիման վրա դատական փորձագետի կարգավիճակ ձեռք բերած գիտության, տեխնիկայի, արվեստի ու արհեստի որևէ բնագավառի մասնագետի կողմից այն դեպքում, երբ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննությունը նման պարտադիր պայման չի նախատեսում:

Դատական փորձաքննությունների արդյունքներով լրիվ, ամբողջական եզրակացություն ստանալու համար նախաձեռ-

նողի կողմից (քննիչ, դատարան) փորձագետին են տրամադրվում ոչ միայն փորձաքննության ենթակա օբյեկտները (նյութերը), այլև շատ հաճախ քրեական գործի նյութերը, որոնք փորձաքննության կատարման գործընթացում ձեռք են բերում անփոխարինելի դեր, իսկ շրջակա միջավայրի ազդեցության վրա փորձաքննության կատարման դեպքում ոչ միայն նման ընթացակարգ չի գործում, այլև չի կարող լինել, որովհետև վերջին փորձաքննության կատարումը չի առնչվում քրեական գործի վարույթի հետ:

Շրջակա միջավայրի առանձին բնագավառներում արձանագրված հանցագործությունների վերաբերյալ գործերով կարող է նշանակվել դատական բնապահպանական փորձաքննություն, որը չի կարող սահմանափակվել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության արդյունքներով, քանի որ այնտեղ չեն պահպանված դատավարության մասնակիցների՝ վարույթն իրականացնող մարմինների, մեղադրյալի, ամբաստանյալի իրավունքներն ու պարտականությունները: Այսպես, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի 10-րդ կետի՝ վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է մեղադրյալին, կասկածյալին ծանոթացնել փորձաքննությունների և մասնագիտական ստուգումների նշանակման մասին որոշումների բովանդակությանը, որոնց կապակցությամբ նրանք կարող են ներկայացնել իրենց առաջարկությունները փորձաքննությանը ներկայացված հարցերի շուրջ:

Դատական փորձաքննությունների նշանակման ժամանակ՝ ի տարբերություն շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության, քրեական վարույթն իրականացնող մարմնի միջոցով մեղադրյալն իրավունք ունի ծանոթանալ փորձաքննությունների և մասնագիտական ստուգումների նշանակման մասին որոշումների բովանդակությանը: «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» օրենքի հիման վրա կատարված փորձաքննությունը նպատակ է հետապնդում կանխորոշել, կանխարգելել կամ նվազեցնել, նվազագույնի հասցնել հայեցակարգի և նախատեսվող գործունեության վնասակար ազդեցությունը մարդու առողջության, շրջակա միջա-

վայրի, տնտեսական և սոցիալական բնականոն զարգացման վրա (Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մաս):

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածը թեև հատուկ չի նշում քրեական գործով վարույթն իրականացնող մարմնի կողմից առաջադրված հարցերին գրավոր տրված պատասխանները որպես ապացույց ճանաչելու դրույթը, սակայն քրեական դատավարական օրենսգրքի 243-րդ հոդվածը նշում է, որ փորձաքննությունը կատարվում է վարույթն իրականացնող մարմնի որոշման հիման վրա, երբ քրեական գործով (ընդգծումը մերն է՝ Ջ.Թ.) նշանակություն ունեցող հանգամանքները պարզելու համար անհրաժեշտ են գիտության, տեխնիկայի, արվեստի, արհեստի, այդ թվում՝ համապատասխան հետազոտությունների մեթոդիկայի բնագավառներում հատուկ գիտելիքներ: Հոդվածը միաժամանակ ընդգծում է, որ վարույթն իրականացնող մարմինների, մասնագետների, ընթերականների, հատուկ գիտելիքների առկայությունը չի ազատում համապատասխան դեպքերում փորձաքննությունն նշանակելու անհրաժեշտությունից:

Շարունակելով այս դատողությունը՝ անհրաժեշտ է նշել, որ քրեական գործով փորձագիտական անհրաժեշտ եզրակացություն ստանալու համար քրեական դատավարության օրենսգիրքը հատուկ կանգ է առել այն փաստաթղթերի բովանդակության վրա, որոնց կայացմամբ միայն կարող են կատարվել փորձաքննություններ: Դա փորձաքննությունն նշանակելու մասին որոշումն է (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդված), որի բովանդակությունը կայանում է հետևյալում. վարույթն իրականացնող մարմինը փորձաքննությունը նշանակելու մասին կայացնում է պատճառաբանված որոշում, որում նշվում են դատական փորձաքննությունն նշանակելու հիմքերը, փորձաքննության ուղարկվող իրեղեն ապացույցները (օբյեկտները)՝ նշելով՝ երբ, որտեղ, ինչ հանգամանքներում են դրանք հայտնաբերվել կամ ձեռք բերվել, դրանց ձեռքբերման մասին կազմված արձանագրությունները, իսկ քրեական գործի նյութերով փորձաքննություն կատարելիս՝ տեղեկություններ, որոնց վրա կարող են հիմնվել փորձագետի հետևությունները, փորձագետին

առաջադրված հարցերը, փորձագիտական հիմնարկի անվանումը կամ այն մասնագետի անունը, ազգանունը, հայրանունը, որին հանձնարարվում է փորձաքննության կատարումը, նրա աշխատանքային ստաժը, գիտական կոչումը, գիտական աստիճանը և այլն: Նման մոտեցում չի պահանջվում շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննությունն նշանակելիս:

Դատական փորձաքննությունն նշանակելիս փորձագետը նախապես վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ նախագուշացվում է ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին (ՀՀ քրեական օրենսգրքի 337-րդ հոդված): Նման կարգ սահմանված չէ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություններն նշանակելիս:

Չեն կարող փորձաքննություններ համարվել խորհրդատվությունները, թեկուզ դրանք ստացված լինեն գիտության, տեխնիկայի, արվեստի կամ արհեստի որևէ բնագավառի հանրաճանաչ անձի կողմից, ինտերնետային տարբեր կայքերում տեղադրված տարբեր պարզաբանումներն ու հաղորդումները:

Փորձաքննությունների շարքին չեն դասվում նաև զանգվածային լրատվամիջոցներով գիտության և տեխնիկայի, արվեստի, արհեստի բնագավառների վերաբերյալ հրապարակումները: Նշված աղբյուրների պարզաբանումները, մեկնաբանությունները, հրապարակումները հեռու են դատական փորձաքննության եզրակացություն համարվելուց և քրեական գործի վարույթն իրականացնող մարմինների համար որպես ապացույց ճանաչվելու փաստից, առավել ևս՝ դատական որևէ ակտի հիմքում դնելու հնարավորությունից: Եթե նույնիսկ մեկնաբանությունները, պարզաբանումները տրված լինեն գրավոր, միևնույն է, դրանք չեն կարող դիտվել որպես փորձագիտական պատշաճ հետազոտություններ, այլ կրում են ընդամենը գիտության, տեխնիկայի, արվեստի ու արհեստի բնագավառի մասին որոշակի տեղեկատվություն՝ որպես լրացուցիչ արձագանք, աշխատանքային կարգով ստացված տվյալներ, հետազայում փորձաքննությունն նշանակելու մասին որոշում կայացնելիս հարցա-

դրման տեսքով օգտագործելու և փորձագետին ուղղված որոշման մեջ հարցերի ցանկում ընդգրկելու համար:

Ինտերնետային կայքերի պարզաբանումները, զանգվածային լրատվամիջոցների հաղորդումները, խորհրդատվությունները չեն կարող փոխարինել փորձագիտական եզրակացություններին, քանի որ դրանք հենված չեն հետազոտվող օբյեկտների (նյութերի) ուսումնասիրության վրա: Դրանք զուրկ են օբյեկտի կառուցվածքի, դրա վրա հանցագործության հետքերի, իրավաբանական արժանի գնահատական տալու հնարավորություններից: Խորհրդատվությունները, պարզաբանումները, մեկնաբանությունները ստացվում են, որպես կանոն, առանց դատավարական ընթացակարգերի պահպանման և, հետևաբար, քրեական դատավարությունում ապացույցներ չեն համարվում:

Փորձագիտական եզրակացություններ չեն կարող համարվել տարբեր գերատեսչություններում, հիմնարկներում և կազմակերպություններում վերադասության կարգով իրականացված ստուգումների, ստուգայցերի, հետազոտությունների արդյունքները, դրանց հիման վրա կազմված ակտերն ու արձանագրությունները, երբ վարույթն իրականացնող մարմիններում, վերահսկիչ պալատի, առանձին ֆինանսական մարմինների, հարկային, մաքսային ծառայությունների, վերահսկողական ստուգումների մասին արձանագրություններ են ստացվում, որոնք կարող են փաստաղթերի ձևով կցվել քրեական գործի նյութերին, բայց երբեք ոչ որպես փորձագիտական եզրակացություններ: Ստուգումների, ուսումնասիրությունների, ստուգայցերի արդյունքները՝ ակտերի ու արձանագրությունների բովանդակության մեջ առկա փաստերը, ձեռք կբերեն ապացույցի նշանակություն, միայն եթե դրանց հիման վրա նշանակվեն դատահաշվապահական, դատաձեռագրաբանական, փաստաթղթերի տեխնիկական փորձաքննություններ՝ նյութական արժեքների շարժի հափշտակության փաստեր կամ այլ չարաշահումներ, կեղծիքներ հայտնաբերելու նպատակով:

Միայն դատավարական ընթացակարգերով համապատասխան բնագավառի արտոնագրված փորձագետների կողմից օբյեկտների պատշաճ ուսումնասիրության, հանրաճանաչ մե-

թողների կիրառմամբ հետազոտության արդյունքում տված եզրակացությունները կարող են ընդունվել որպես ապացույց: Ակտերն ու արձանագրությունները՝ վարույթն իրականացնող մարմնի որոշման հիման վրա, առանձին դեպքերում կարող են կցվել քրեական գործին, ճանաչվել որպես փաստաթղթեր ու ձեռք բերել ապացուցողական նշանակություն (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետ): Այդ ակտերի, արձանագրությունների պարզաբանումները, դրանց բովանդակության շուրջ տրված ցուցմունքները կարող են ունենալ ապացուցողական նշանակություն և ճանաչվել որպես ապացույցներ, իսկ ակտ-արձանագրություն կազմողները կարող են քրեական գործով հրավիրվել հարցաքննության վարույթն իրականացնող մարմնի կողմից որպես վկաներ՝ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով, սակայն՝ ոչ որպես փորձագետներ:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՃԱՆԱԿՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ

Լ.Չ. Թադևոսյան

Հայ-Ռուսական (Մրավոնական) համալսարան

Հակահասարակական երևույթների դեմ պայքարի դարավոր ճանապարհը բազմիցս է ապացուցել բարդ, բազմադրվագ, բազմաբնույթ, մասնակիցների «առատությամբ» կատարված բարձր վտանգավորություն ներկայացնող հանցագործությունների բացահայտման, դրանց հեղինակների նկատմամբ անհատականացված պատժի նշանակման, հանցագործությունների կանխարգելման, հասարակության անդամների մոտ իրավախախտումների բացահայտման գործում իրավապահ համակարգի մարմինների աշխատանքի նկատմամբ վստահության մթնոլորտի ձևավորման մեջ դատական փորձաքննությունների անփոխարինելի դերն ու նշանակությունը: Քրեական հետապնդման մարմինների և ընդհանրապես փորձաքննության նշանակման նախաձեռնող մարմինների գործունեության մեջ գիտության, տեխնիկայի, արվեստի ու արհեստի տարբեր բնագավառներում համապատասխան մասնագիտական գիտելիքներով օժտված անձանց ներգրավմամբ ապացույցներ ձեռք բերելը, այսօր քան երբևէ, դարձել է անխուսափելի անհրաժեշտություն:

Ինչպես ցույց է տալիս դատական պրակտիկան, քիչ են այն քրեական գործերը, որոնցում անհրաժեշտություն չառաջանա նշանակել դատական այս կամ այն փորձաքննությունը. ապացուցման աղբյուր, որը միաժամանակ բացահայտում է քրեական հետապնդման մարմինների, դատարանների առօրյա գործունեության մեջ դատավարական այդ մշակույթի ներդրման կարևորության առկայությունը:

Դիպուկ է արտահայտված իրավաբանական գրականության մեջ, որ ապացուցման ընթացքում քննիչը և դատարանը ապացույցների հավաքման, հետազոտման, գնահատման բազմաթիվ

մեթոդների են դիմում¹, որոնցից մեկն էլ դատական փորձաքննությանը ապացույցներ ձեռք բերելն է:

Դատական փորձաքննությունների դատավարական ձևը կազմում է ընդհանուր դատավարության ընթացակարգի ձևի մի հատվածը. այն ուրույն նշանակություն ունի արդարադատության իրականացման բարենպաստ պայմաններ ստեղծելու գործում:

Քրեական դատավարության օրենսգրքի՝ որպես պետական իշխանության պաշտոնական փաստաթղթի պահանջներն իրականացվում են դատավարական ընթացակարգերով՝ բացարձակապես ապահովելով դրա պահանջների անթերի կատարումը քրեական գործի վարությամբ: Օրենքի պահանջների խախտումները կասկածանքի տակ են դնում դատավարական գործողությունների և որոշումների արդարացիությունը, խախտում դատավարության մասնակիցների իրավունքներն ու օրինական շահերը, նվազեցնում արդարադատության արդյունավետությունը, առաջացնում իրավական նիհիլիզմ, անվստահություն պետական կառույցների գործունեության նկատմամբ, առաջացնում զանգվածային դժգոհություններ այն անձանց մոտ, որոնք այս կամ այն առիթով առնչվել են դատավարության փուլերի հետ: Դրա հետ մեկտեղ էական խախտումները օրենսդրությունը դարձնում են անգործող ու անիրատեսական, որպիսի հանգամանքը պահանջում է անհապաղ միջամտություն, խախտված իրավական նորմի պահանջների վերականգնում ու ուղղում: Այս ամենն ամբողջովին վերաբերում է դատական փորձաքննությունների իրականացման ընթացքում միջոցների ու մեթոդների ճիշտ ընտրության, փորձագիտական անհրաժեշտ տեխնիկական սարքերի, գիտության, տեխնիկայի, արվեստի ու արհեստի նվաճումների անթերի կիրառման և վերջապես որպես ապացույցի տեսակի՝ օրենքի պահանջներին համապատասխան եզրակացությունների կազմման ու ներկայացման վարույթն իրականացնող մարմիններին ներկայացվող միջոցառումներին:

Դատական փորձաքննությունների վերաբերյալ գործող քրեական դատավարության օրենսդրությունը նախատեսել է դրա իրականացման հիմքերն ու նպատակները: Համաձայն գործող օրենսդրության փորձաքննությունը կատարվում է նախաձեռնող մարմնի պաշտոնատար անձի (քննիչի, դատարանի) որոշման

¹ Ст' у Белкин Р.С., Винберг А.И. Криминалистика и доказывание, М.: «Юридическая литература», 1969, էջ 13:

հիման վրա, երբ քրեական գործով նշանակություն ունեցող հանգամանքները պարզելու համար անհրաժեշտ է գիտության, տեխնիկայի, արվեստի կամ արհեստի բնագավառի գիտելիքների օգտագործում, այդ թվում՝ համապատասխան հետազոտությունների մեթոդիկայի հատուկ գիտելիքներ ու փորձ: Ի դեպ, նշենք, որ եթե նախաձեռնող մարմնի պաշտոնատար անձը տիրապետում է փորձաքննության կոնկրետ բնագավառի ոլորտներին առնչվող անհրաժեշտ գիտելիքների, ապա այդ հանգամանքը չի ազատում նրանց համապատասխան փորձաքննություններ նշանակելու անհրաժեշտությունից: Այս դրույթը պայմանավորված է նրանով, որ փորձագետը՝ համաձայն ՀՀ քրեական դատավարության 85-րդ հոդվածի, գործով չշահագրգռված այն անձն է, որին քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ կամ փորձաքննություն նշանակելու մասին նախաձեռնող մարմնի որոշման համաձայն նշանակում է փորձագիտական մարմնի ղեկավարը: Գիտության, տեխնիկայի, արվեստի և արհեստի տարբեր բնագավառներում փորձագետի հատուկ մասնագիտական գիտելիքներն ու փորձը օգտագործելով, հետազոտության ընթացքում տեխնիկական միջոցների անվանումները, գիտական հետազոտությունների աղբյուրները նշելով, ինչպես նաև օգտագործելով իր աշխատանքային հմտություններն ու փորձը, քրեական գործի նյութերը՝ նա հանգում է որոշակի եզրակացության:

Նշենք, որ քրեական դատավարության օրենսդրությունը միանշանակ չի ընդունում փորձագիտական հետազոտության ընթացքում և եզրակացության մեջ քրեական գործի նախաքննության և դատաքննության ընթացքում ձեռք բերված նյութերը (վկայի, տուժողի հարցաքննության արձանագրությունները, այլ փորձաքննությունների հետազոտության արդյունքները, դեպքի վայրի զննության արձանագրությունները, զննության մասին արձանագրությունները, իրեղեն ապացույցները և այլն) օգտագործելը՝ նման մոտեցումը համարելով սխալ:²

Կարծում ենք, որ արտահայտված տեսակետը թեև ունի իր գոյությունը պահպանելու իրավունքը, այդուհանդերձ ամբողջովին չի արտահայտում այն իրողությունը, որին հանդիպում ենք քրեական գործերի քննության ընթացքում:

² Տե՛ս *Спрогович М.С.* Курс советского уголовного процесса, т. 1, М., 1968, էջ 44:

Ինչպես ցույց է տալիս դատական պրակտիկան, հայտնի են բազմաթիվ դեպքեր, երբ փորձաքննության ընթացքում փորձագետի կողմից քրեական գործի նյութերի կիրառումը բերել է սխալ փորձագիտական եզրահանգումների, քանի որ այդ նյութերը ձեռք են բերված եղել քրեադատավարական նորմերի կոպիտ խախտումներով, վարույթի մասնակիցների ոչ օբյեկտիվ, իսկ հաճախ նաև՝ ոչ պրոֆեսիոնալ գործողության արդյունքում: Այստեղից հետևություն, որ եթե փորձագետն իր հետազոտության հիմքում դնում կամ օգտագործում է քրեական գործով ձեռք բերված այլ նյութեր, պարտավոր է համոզված լինել դրանց հավաստիության մեջ. հակառակ պարագայում, դրանք կարատավորեն փորձագիտական եզրակացության նշանակությունն ու դերը քրեական գործի այս կամ այն հանգամանքը հիմնավորելու կամ բացառելու բարդ ու պատասխանատու խնդրում:

Բանը նրանումն է, որ փորձագիտական հետազոտություններն իրականացվում են ապացուցման դատավարական փուլում և հանդիսանում են դրա բաղկացուցիչ մասը ու փորձագետի եզրակացությունները ստանալուն պես վարույթ իրականացնող մարմինների կողմից օգտագործվում են ապացուցման գործընթացում:

Ի տարբերություն դատավարական այդ գործողությունների՝ փորձաքննության ընթացքում քրեական գործի համար կարևորագույն փաստերը (ապացույցները) ստացվում են առանց նախաձեռնող մարմինների պաշտոնատար անձանց (մինչդատական վարույթի և արդարադատության մարմինների) անմիջական մասնակցության: Սրանից ելնելով է, որ գործող քրեադատավարական օրենսդրությունը հատուկ դրսևորում է ցուցաբերել փորձաքննության դատավարական երաշխիքներ ապահովելու համար, որոնց անշեղ իրականացումը կապահովի փորձագետի կողմից հավաստի, լրիվ և օբյեկտիվ բացահայտելու՝ գործի համար էական նշանակություն ունեցող փաստերն ու հանգամանքները, և, հետագայում, դատարանի և քննիչի կողմից փորձագիտական հետևությունների բազմակողմանի ստուգումը կհանգեցնի գործով օրինական որոշումների կայացմանը: Դրանով փորձաքննությամբ ձեռք բերված և քրեական գործի լուծման համար կարևորագույն փաստերի ամբողջությունը և դրանց արդյունքների գնահատումը քննիչի և դատարանի կողմից ապացուցման ընդհանուր գործընթացում զբաղեցնում է յուրահատուկ տեղ և ունի որոշիչ նշանակություն: Փորձաքննության կատարման համար դատավարական հատուկ երաշխիքների սահմանումը, դրանց պահպանումը կոչված է

նպաստելու քրեական գործով բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն իրականացնելու խնդիրների լուծմանը: Քննիչի ու դատարանի կողմից այդ փաստական տվյալների բազմակողմանի ստուգման հնարավորությունը ձևավորում է այն առանձնահատկությունների ամբողջականությունը, որոնցով օժտված է դատական փորձաքննության եզրակացությունը՝ ի համեմատություն և պացուցման մյուս ձևերի³:

Փորձաքննության բազմակողմանի, լրիվ, օբյեկտիվ և հավաստի իրականացման երաշխիքներից է քրեական գործով նախաձեռնողի կողմից նշանակված փորձագետների օրենսդրական պարտականությունների հստակ շարադրանքը, համաձայն որոնց փորձագետը պարտավոր է քրեական վարույթն իրականացնող մարմնին և իրեն հրավիրած անձի ներկայացրած հարցերին տալ հիմնավորված, օբյեկտիվ եզրակացություն և պատասխաններ, հրաժարվել փորձաքննություն կատարելուց, եթե առաջադրված հարցերը դուրս են գալիս իր հատուկ գիտելիքների շրջանակից կամ ներկայացված նյութերը բավարար չեն այդ հարցերին լիիրավ պատասխանելու համար՝ այդ մասին հատուկ նշելով տրված եզրակացության մեջ:

Փորձագետը պարտավոր է հետազոտության արդյունքում եզրակացություն տալ ոչ միայն առաջադրված հարցերին, այլ նաև իր իրավասության շրջանակների սահմանների մեջ մտնող և փորձաքննության կատարման ընթացքում ի հայտ եկած նոր հանգամանքներով: Օրենսդրական այս պահանջը պայմանավորված է նրանով, որ փորձաքննության ընթացքում կարող են բացահայտվել այնպիսի՝ գործի համար էական նշանակություն ունեցող հանգամանքներ, որոնց գոյությունը կամ փորձագետից ստանալու հնարավորությունը քննիչը կամ դատարանը չէին կարող ենթադրել փորձաքննությանը ներկայացված որոշման հարցերը ձևակերպելիս:

Փորձագետը պարտավոր է վարույթն իրականացնող մարմնի կանչով ներկայանալ դատավարության մասնակիցների հարցերին պատասխանելու, ինչպես նաև իր կողմից տրված եզրակացության բովանդակությունը պարզաբանելու համար, քրեական վարույթն իրականացնող մարմնի, ինչպես նաև մեղադրանքի և պաշտպանու-

³ Տե՛ս *Винберг А.И.* Заключение эксперта // В кн.: «Теория доказательств в советском уголовном процессе» / М.: «Юридическая литература», 1979, էջեր 700–701:

թյան կողմերի պահանջով դատական նիստերի ժամանակ տեղեկություններ հայտնել իր մասնագիտական փորձի համապատասխան քրեական գործով վարույթին մասնակցող անձանց հետ հարաբերությունների մասին, քննչական և այլ դատավարական գործողությունների մասնակցելու դեպքում չլքել նշված գործողության կատարման վայրը՝ առանց այն կատարող անձի թույլտվության, իսկ դատական նիստերի դահլիճը՝ առանց դատական նիստի նախագահողի թույլտվության, ենթարկվել վարույթն իրականացնող մարմինների օրինական կարգադրություններին, չհրապարակել տեղեկատվություն քրեական գործի վարույթի ընթացքում իրեն հայտնի հանգամանքների մասին՝ առանց վարույթն իրականացնող մարմինների թույլտվության: Թվարկված պարտականությունների խախտումներն առաջ են բերում քրեական օրենսդրությամբ սահմանված պատասխանատվություն:

Նշենք նաև, որ փորձագետի կողմից ակնհայտ կեղծ եզրակացություն տալը՝ որպես դատավարության մասնակցի հակաօրինական վարքի դրսևորում, արտահայտվում է իրավանորմի պահանջի չկատարման և իրավական արգելքի չպահպանման մեջ⁴, որը, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 337-րդ հոդվածի, առաջ է բերում քրեական պատասխանատվություն, իսկ եթե նշված արարքը զուգորդվել է արհեստական ապացույցներ ստեղծելով կամ կատարվել է շահադիտական դրդումներով, պատժվում է ավելի խիստ՝ մինչև հինգ տարի ժամկետով ազատազրկմամբ:

Քրեական օրենսգիրքը սահմանել է, որ փորձագետը ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե նախաքննության կամ դատաքննության ընթացքում՝ մինչև դատարանի կողմից դատական ակտ կայացնելը, կամովին հայտնել է իր տված կեղծ եզրակացության մասին:

Քրեական դատավարության օրենսգիրքը, սահմանելով փորձագետի դատավարական իրավունքներն ու անկախությունը, դրանց իրականացման նպատակով ապահովելով համապատասխան երաշխիքներով, ինչպես նաև պարտավորեցնելով նրա կողմից

⁴ Տե՛ս *Косарев В.Н., Косарева Л.В., Макогон И.В.* К вопросу дифференциации юридической ответственности; *Правонарушение и юридическая ответственность*, Тольятти, 2012, էջ 171: *Винберг А.И.* Заключение эксперта // В кн.: «Теория доказательств в советском уголовном процессе» / М.: «Юридическая литература», 1979, էջեր 700–701:

տրվող եզրակացության հավաստիության օբյեկտիվության, հիմնավորվածության և լրիվության անհրաժեշտությունը, նրան օժտել է նաև մի շարք դատավարական իրավունքներով, որոնց ապահովումն ու պաշտպանությունը կայուն երաշխիքներ են տալիս ստացված եզրակացությունը որպես ապացուցման ընդհանուր գործընթացի կարևորագույն տարր ճանաչելու համար: Օրենսդրական այդ իրավունքներն են քրեական վարույթն իրականացնող մարմնից եզրակացություն տալ և համեմատական հետազոտման համար պահանջել անհրաժեշտ օբյեկտներ, նմուշներ և այլ նյութեր, նախաձեռնող մարմնի թույլտվությամբ ծանոթանալ քրեական գործում եղած նյութերին, գործի նյութերից դուրս գրել անհրաժեշտ տեղեկություններ և իր փորձագիտական պարտականությունները պատշաճ կատարելու համար հարցեր տալ կասկածյալին, մեղադրյալին, տուժողին, վկաներին, ծանոթանալ փորձաքննության առարկայի վերաբերյալ այլ նյութերին, դրանցից դուրս գրել անհրաժեշտ տեղեկություններ:

Փորձագետի համար նման իրավունքի ապահովումը լայն ճանապարհ է բաց անում գիտության, տեխնիկայի, արվեստի ու արհեստի բնագավառներում հատուկ գիտելիքների ներդրմամբ կողմնորոշվելու, հետազոտության ընթացքում ծագած բարդ խնդիրներին լուծում տալու համար: Օրենքի նման մոտեցումը միաժամանակ նպաստում է այն գործընթացին, որ փորձագիտական եզրակացությունը խարսխվի քրեական գործով ձեռք բերված այլ ապացույցների վրա՝ նվազագույնի հասցնելով այն հակասությունների քանակը, որոնք կարող են լինել փորձագիտական եզրակացության և գործի այլ հանգամանքների միջև: Այս մոտեցումը չի բացառում նաև փորձագետի կողմից քրեական գործի նյութերին ճիշտ հակառակ ապացուցողական եզրակացության հանգումը, եթե դրա օգտին են խոսում այն հատուկ գիտելիքները, որոնցով օժտված է փորձագետը ու հետազոտվող օբյեկտի առանձնահատկություններն ու բնորոշ տարրերը:

Փորձագետի օրենսդրական կարևորագույն իրավունքների շարքին պետք է դասել նաև այն, որ նա կարող է ծանոթանալ իր մասնակցությամբ կատարված քննչական կամ այլ դատավարական գործողության արձանագրությունների բովանդակությանը, ինչպես նաև դատական նիստի արձանագրության այն հատվածին, որը վերաբերում է իր կողմից տրված եզրակացության բանավոր մեկնաբանությունների լրիվությանը և ճշտությանը, անել դիտողություններ այդ կապակցությամբ և պահանջել, որ դրանք մտցվեն

արձանագրության մեջ: Ի դեպ, նշենք, որ օրենսդիրը չի սահմանել փորձագետի պարտականությունների սպառնիչ ցանկը՝ արձանագրելով, որ նա կարող է ունենալ այլ իրավունքներ ու պարտականություններ: Այս ամենի ընդհանրությունը արտահայտում է դատավարական ամբողջ երաշխիքների ձևավորումը, որոնք առանձնացնում են դատական փորձաքննությունն ապացուցման այլ միջոցներից ու ձևերից:

Գործող քրեական դատավարության օրենսդրությունը (114-րդ հոդված) սահմանել է նաև փորձագիտական եզրակացության բնորոշումը, որ այն գիտության, տեխնիկայի, արվեստի, արհեստի որևէ բնագավառում հատուկ գիտելիքների օգտագործմամբ գրավոր հիմնավորված հետևություններն են, փորձագետին առաջադրված հարցերի, ինչպես նաև իր իրավասության մեջ մտնող այն հանգամանքների վերաբերյալ, որոնց նա հանգել է գործի համապատասխան նյութերը հետազոտելով:

Անհրաժեշտ է նշել, որ օրենքի վերը շարադրված բովանդակությունից և հատկապես «համապատասխան նյութերը հետազոտելիս» բառակապակցությունից բխում է այն իրողությունը, որ փորձագիտական հետազոտությունը սահմանափակվում է ոչ միայն համապատասխան բնագավառում մասնագետի հատուկ գիտելիքների օգտագործմամբ փորձաքննության նախաձեռնողի (քննիչ, դատարան) կողմից ներկայացված օբյեկտների (ձեռագիր, կնիք, հրագենի կրակոցի արգասիքներ, հրագեն, սառը զենք, միկրոմասնիկներ, քիմիական նյութեր, արհեստի ու արվեստի ստեղծագործություններ ու առարկաներ և այլն) ուսումնասիրությամբ ու դրանց մասին եզրակացություն տալով, այլև գործի համապատասխան նյութերը, օրինակ՝ մինչ քրեական գործի հարուցումը հետաքննության նախապատրաստած նյութերը, որոնք անբաժանելի մաս են կազմում քրեական գործի բովանդակության, և քրեական գործ հարուցումից հետո ձեռք բերված նյութերն ու ապացույցներն ուսումնասիրելով և դրանց մասին եզրակացության հանգելով: Այս հանգամանքը նույնպես հիմնավորում է վերը նշված մեր այն կարծիքը՝ հակառակ առանձին հեղինակների ոչ հիմնավոր մոտեցման, որ փորձագիտական եզրակացության հիմքում պետք է դրվեն ոչ միայն փորձագետին ներկայացված օբյեկտների հետազոտման արդյունքները, այլև հետաքննության, նախաքննության և դատաքննության նյութերը: Ի դեպ, նշենք, որ փորձագիտական եզրակացության բնորոշման մեջ՝ փորձագետի կողմից գիտության, տեխնիկայի, արվեստի ու

արհեստի որևէ բնագավառի հատուկ գիտելիքների օգտագործմամբ գրավոր հիմնավորված հետևությունների ամբողջությունը նշելուց բացի, անհրաժեշտ է հատուկ շեշտել նաև գիտության, տեխնիկայի, արվեստի ու արհեստի որևէ բնագավառի վերաբերյալ համապատասխան գրականության, փորձարարական հետազոտությունների մասին ուսումնասիրությունների, գիտության նվաճումների և հատկապես փորձագետի աշխատանքային փորձի անհրաժեշտությունը, որպիսի հանգամանքներին հղումներ կատարելը փորձաքննության արդյունքները դարձնում են ավելի ամբողջական ու համոզեցուցիչ: Այս առումով պատահական չէ նաև փորձագիտական եզրակացության մեջ տվյալ բնագավառում փորձագետի աշխատանքային ստաժի հատուկ նշումը՝ որպես նրա կողմից տրված եզրակացության ապացուցողական նշանակության բարձրացման նշանդրի կարևոր տարր: Այս հանգամանքի հատուկ արձանագրումը եզրակացության նկարագրական մասում ակամա իր վրա է սևեռում դատավարության կողմերի, մասնակիցների, դատարանի ուշադրությունը՝ ընկալելու, որ եզրակացությունը շարադրված է հմուտ մասնագետի կողմից, քանի որ փորձագետի աշխատանքային փորձը կարևոր տարր է նրա եզրահանգումների հիմնավորվածության մասին:

Այսպիսով, փորձագիտական հետազոտությունը և եզրակացությունը չպետք է հիմնված լինեն միմիայն փորձագետին ներկայացված օբյեկտների հետազոտության վրա, այլ կարող ենք ընդգծել, որ փորձագետը եզրակացություն կարող է տալ անմիջականորեն փորձաքննության ներկայացված օբյեկտների հետազոտության արդյունքների ուսումնասիրության հիման վրա, եզրակացություն կարող է տրվել փորձաքննությանը ներկայացված օբյեկտների ու քրեական գործում առկա այլ նյութերի միասնական հետազոտության վրա, ինչպես նաև եզրակացություն կարող է տրվել միմիայն քրեական գործի նյութերի վրա: Վերջին երկու դեպքերում փորձագիտական եզրակացության հիմնավորվածությունն ուղղակի կախված է քրեական գործով ձեռք բերված նյութերի հավաստիությունից, որի երաշխավորներն են վարույթն իրականացնող մարմինների ներկայացուցիչները, քանի որ քրեական գործով ոչ օրինական ճանապարհով ձեռք բերված նյութերը, ինչպես նշեցինք վերևում, խաթարում են փորձագիտական եզրակացության օբյեկտիվությունը՝ այն դարձնելով ապօրինությունների առկայության փաստ:

Փորձաքննության կատարման շարժառիթը քրեական հետապնդման մարմնի կողմից կայացված որոշումն է, որում պետք է տրվեն փորձաքննության նշանակման հիմքերը, փորձաքննության ուղարկվող օբյեկտները (իրեղեն ապացույցներ) դրանց առանձնահատկություններ՝ նշելով, թե դրանք երբ և ինչ հանգամանքներում են ձեռք բերվել, դրանց աղբյուրները, այն արձանագրությունները, որոնք կազմվել են իրեղեն ապացույցները ձեռք բերելու մասին, իսկ քրեական գործի նյութերով փորձաքննություն կատարելիս որոշման մեջ տեղեկություններ պետք է հայտնվեն փաստերի աղբյուրների մասին: Որպես կանոն փորձագիտական հիմնարկներում փորձաքննությունները կատարվում են միանձնյա, իսկ հաճախ էլ փորձագիտական հիմնարկի մի շարք մասնագետների կողմից. դա հաճախ պայմանավորված է հետազոտվող օբյեկտների բազմազանությամբ, ծավալով և աշխատանքների ընդգրկվածությամբ: Այս պարագայում փորձագիտական հիմնարկի ղեկավարն իր նախաձեռնությամբ է կազմակերպում փորձաքննությունը: Իսկ եթե հանձնաժողովային փորձաքննություն կատարելու մասին որոշում է կայացրել նախաձեռնող մարմինը, ապա փորձագիտական հիմնարկի ղեկավարը պարտավոր է աշխատանքները կազմակերպել հանձնաժողովային փորձաքննությամբ:

Քրեական դատավարության կողմերի պահանջով փորձագետների խմբի կազմում կարող են ընդգրկվել իրենց կողմից հրավիրված մասնագետները /ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 45-րդ հոդված/:

Կարծում ենք, որ «կարող է» բառակապակցությունը չի ապահովում, օրինակ, պաշտպանության կողմի դատավարական իրավունքներն ու օրինական շահերը, քանի որ այդ դեպքում վարույթն իրականացնող մարմինը պարզապես պարտավորություն չի կրում անպայման փորձագիտական հանձնաժողովի կազմում ընդգրկել մեղադրյալի կողմից հրավիրված փորձագետին: Կարծում ենք, որ հանձնաժողովի կազմում մեղադրյալի հրավիրված փորձագետի ընդգրկումը պետք է պարտադիր լինի վարույթն իրականացնող մարմնի համար: Այս մոտեցումը պետք է նաև իր արտահայտությունը գտնի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 63-րդ և 65-րդ հոդվածներում, որտեղ շարադրված են կասկածյալի և մեղադրյալի իրավունքները: Դրանց շարքում պետք է տեղ գտնեն փորձագետների կազմում կասկածյալի ու մեղադրյալի բացառիկ իրավունքները իրենց կողմից նշված փորձագետին փորձագիտական հանձնաժողովների կազմում ընդգրկելու մասին:

Փորձաքննության եզրակացության տակ որպես կանոն ստորագրում է փորձաքննությունը կատարող մասնագետը (փորձագետը), խմբի դեպքում՝ բոլոր մասնակիցները: Իսկ եթե փորձագետների խմբի որևէ անդամ հետազոտության արդյունքում հանգել է այլ հետևության, նա չպետք է ստորագրի եզրակացության տակ, այլ պետք է շարադրի իր հետևությունները, որում մանրամասն պետք է պատճառաբանվեն այն հանգամանքները, որոնք հիմք են ծառայել իր կողմից այլ հետևության հանգելու:

Շատ հաճախ անհրաժեշտություն է ծագում գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները պարզելու նպատակով փորձաքննությանը մասնակից դարձնել գիտության, տեխնիկայի, արվեստի, արհեստի կամ այլ բնագավառներում կամ հետազոտությունների մեթոդիկայի միաժամանակյա կիրառում. այս պարագայում նշանակվում է համալիր փորձաքննություն, օրինակ՝ դատաբժշկական և դատահոգեբանական, ձգաբանական և քիմիական, ձեռագրաբանական և փաստաթղթերի տեխնիկական, դատաբժշկական և կենսաբանական, քիմիական ու այլ փորձաքննություններ:

Հետազոտության արդյունքների հիման վրա կազմվում է մեկ ընդհանուր փորձագիտական եզրակացություն, որում փորձաքննությանը մասնակից յուրաքանչյուր անհատ (մասնագետ) շարադրում է եզրակացության միմիայն այն մասը, որը վերաբերում է իր կողմից իրականացրած հետազոտությանը և ստորագրում է հետևության այդ մասը, որը պատկանում է իր մասնագիտական իրավասությանը: Ինչպես համալիր, այնպես էլ հանձնաժողովային փորձաքննությունների կատարման ընթացքում յուրաքանչյուր մասնագետ (փորձագետ) պահպանում է իր անկախությունը ու անկողմնակալությունը իր գործողությունների, որոշումների կայացման ընթացքում՝ ընտրելով իր համար ամենաընդունելի տարբերակները:

**ՓՈՐՁԱԳԵՏԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՄԱՀՄԱՆՆԵՐԸ
ՄԵՂՍՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՄԵՂՍՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ
ՀԱՐՅԸ ԼՈՒԾԵԼԻՄ**

Զ. Թադևոսյան, Ա.Ֆանյան

Հանրորեն վտանգավոր արարք կատարած անձի մեղաւնակության կամ անմեղաւնակության հարցի լուծումը ներկայիս դատախիրավական պրակտիկայում անհնար է առանց մասնագիտական հատուկ գիտելիքների կիրառման: Դա պայմանավորված է նրանով, որ նախ անձի մոտ որևէ հոգեկան հիվանդության կամ խանգարման առկայության, հետևապես նաև այդ հիվանդության կամ խանգարման դեպքում արարքը կատարելու պահին անձի վարքագիծը կանխորոշելու հարցը կարող է լուծվել միայն համապատասխան բնագավառում հատուկ մասնագիտական գիտելիքների տիրապետող անձի կամ համապատասխան գիտական հաստատությունների մասնագետների կողմից, ովքեր վարույթն իրականացնող մարմնի պաշտոնատար անձի՝ քրեական դատավարության օրենսգրքի պահանջներին համապատասխան կայացրած որոշման ուժով ճանաչվել են փորձագետներ: Բացի այդ, նշված հարցը լուծելիս փորձագետի եզրակացության գործուն դերը ընդգծված է նաև ՀՀ քր. դատ. օր. 108-րդ հոդվածում, համաձայն որի քրեական գործով վարույթում անձի հոգեկան հիվանդության, ժամանակավոր հիվանդագին հոգեկան խանգարման, այլ հիվանդագին վիճակի կամ տկարամտության հետևանքով մեղադրյալի՝ դեպքի պահին իր գործողությունների (անգործության) բնույթը և նշանակությունը գիտակցելու ունակ չլինելը, դրանց վնասակարությունը կամ ղեկավարելու ունակությունը կարող են հաստատվել միայն դատահոգեբուժական կամ դատահոգեբանական փորձագետի եզրակացությունը վարույթն իրականացնող մարմինների պաշտոնատար անձանց կողմից ստացվելուց և հանգամանալից հետագոտվելուց հետո:

Հիշյալ նորմի վերլուծությունը հանգեցնում է այն հետևությանը, որ անձի անմեղսունակության հարցը լուծելիս փորձագետի իրավասությունը սահմանափակվում է փորձաքննության ենթարկված անձի՝ դեպքի պահին իր գործողությունների /անգործության/ բնույթը և նշանակությունը, դրանց վնասակարությունը կամ դրանք ղեկավարելու ունակ չլինելու հանգամանքի հաստատմամբ: Կարծում ենք, պատահական չէ, որ ՀՀ քր. դատ. օր. 108-րդ հոդվածը որևէ կերպ չի շոշափում «անմեղսունակություն» եզրույթը, այլ միայն սահմանում է այդ հասկացության բովանդակությունը կազմող բժշկական և իրավաբանական չափանիշների՝ փորձագետի եզրակացությամբ հաստատվելու ինպերատիվ պահանջը:

Բանը նրանում է, որ մասնագետներից շատերի կարծիքով անձի անմեղսունակության վերաբերյալ փորձագիտական եզրակացության մեջ հստակ մատնանշումը դուրս է փորձագետների իրավասության սահմաններից, քանի որ այդ հարցի լուծումը չի կարող բացառապես պայմանավորվել փորձագետի՝ անմեղսունակության վերաբերյալ հետևությամբ:

Մեր կողմից այս բնագավառում փորձագիտական եզրակացությունների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ դրանցում մշտապես առկա է անձի մեղսունակության կամ անմեղսունակության մասին մատնանշում: Փորձագիտական եզրակացություններում անձի անմեղսունակության կամ մեղսունակության վերաբերյալ հետևությունը շարադրվում է հետևյալ կերպ. «... իրեն մեղսագրվող արարքի նկատմամբ հարկ է ճանաչել անմեղսունակ» կամ հակառակը՝ «մեղսունակ»:

Վերև արտահայտված տեսակետը, կարծում ենք, պայմանավորված է քրեական իրավունքի տեսության մեջ գիտնականների գերակշռող մասի՝ մեղսունակության և անմեղսունակության՝ որպես իրավական ինստիտուտների ընկալմամբ: Այսպես, համընդհանուր կարծիքի համաձայն, մեղսունակությունը, հետևապես նաև անմեղսունակությունը իրավաբանական և ոչ թե բժշկական հասկացություններ են: Մ.Ալեքսանյանի կարծիքով. «Մեղսունակությունն ու անմեղսունակությունը իրավաբանական հասկացություններ են, որոնք թույլ են տալիս հանցագործությունները սահմանագատել հանրության համար վտան-

գավոր արարքներից»¹: Դրա հետ մեկտեղ, մեկ այլ հեղինակի կարծիքով «մեղսունակություն» իրավաբանական հասկացությունը «հոգեբանաիրավական բովանդակություն ունի»²:

Ռ.Միխենի համոզմամբ. «Մեղսունակությունը հոգեկան վիճակ չէ, այլ անձի հոգեկան վիճակի իրավական գնահատման միջոց»³: Մեղսունակության կարևորագույն նշանակությունը կայանում է նրանում, որ դա քրեական պատասխանատվության նախադրյալ է. այդ իսկ պատճառով այն իրավաբանական ինստիտուտ է:

Մեղսունակության, հետևապես նաև անմեղսունակության՝ որպես իրավաբանական հասկացությունների վերը շարադրված ընկալումները հիմք են տալիս եզրակացնելու, որ նըշված հարցերի լուծման իրավասությունը պետք է պատկանի քրեական վարույթն իրականացնող մինչդատական մարմնին և դատարանին, քանի որ դրանք իրավաբանական բնույթի հարցեր են և, հետևապես, դուրս են գտնվում փորձագետի իրավասության սահմաններից:

Հեղինակների մի ամբողջ խումբ համոզված է, որ «հոգեբույժ փորձագետի գործառույթները, փորձաքննության կատարման ընթացքում սահմանափակվում են միայն արարքը կատարելիս անձի հոգեկան վիճակի վերաբերյալ իր մասնագիտական հատուկ գիտելիքներին համապատասխանող եզրակացության ներկայացմամբ...»⁴: Այս կապակցությամբ անհրաժեշտ է պար-

¹ Տե՛ս *Ալեքսանյան Մ.Ս.* Փորձաքննությունը քրեական դատավարությունում / Փորձաքննություն նշանակելը և կատարելը, հետազոտման համար նմուշներ ստանալը / Եր.: «ՄԻՎԱ-ՊՐԵՍՍ» հրատ.: 2009, էջ 607:

² Տե՛ս *Артеменко Н.В.* Актуальные проблемы вменяемости (невменяемости) и возраста уголовной ответственности /сравнительно историко-правовой анализ уголовного законодательства РФ и Франции/. Дисс. на соиск. уч. степ. канд. юр. наук. Ростов н/Д. 1999. էջ 52:

³ Տե՛ս *Мухеев Р.И.* Проблемы вменяемости и невменяемости в советском уголовном праве. Владивосток. 1983. էջ 13:

⁴ Տե՛ս *Протченко Б., Рудяков А.* Большая тема // Коммунист, 1989. № 3. էջ 53: Строгович М.С. Курс советского уголовного процесса. Т.1. М.1968. էջեր 440–442: Степичев С.С., Хомовский А.А. Особенности производства по применению принудительных мер медицинского характера. // Социалистическая законность. 1967. № 5. էջ 57:

գել նախ, թե ինչն է հատկապես ընդգրկում փորձագետի «հատուկ գիտելիքներ» եզրույթի բովանդակությունը: Մասնագիտական գրականության մեջ «հատուկ գիտելիքներ» եզրույթը սահմանելու բազում փորձեր են արվել, սակայն դրա առնչությամբ դեռևս միասնական կարծիք չկա, թեև ձևավորված մի հարցի շուրջ մասնագետների զգալի մասը համակարծիք է. «հատուկ գիտելիքների» շրջանակը իրավաբանական բնույթի հարցեր չի ընդգրկում:

Իրավաբանական գրականության մեջ, ավանդաբար, «հատուկ գիտելիքներ» եզրույթի ներքո հասկացվում է գիտության կամ տեխնիկայի, արվեստի կամ արհեստի որևէ բնագավառում տեսական և գործնական գիտելիքների համակարգը, որոնք ձեռք են բերվել մասնագիտական փորձի, հատուկ պատրաստվածության կամ այլ ճանապարհով⁵: Ըստ մի շարք հեղինակների՝ դրանց մեջ չեն մտնում ինչպես հանրահայտ, այնպես էլ իրավաբանական գիտելիքները⁶:

Փորձաբնության էության, քրեական գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների պարզաբանման գործում փորձագետի եզրակացության դերի բացահայտման և դրա գնահատման հետ կապված ամենաբարդ հարցերից մեկը «հատուկ գիտելիքներ» հասկացության բացահայտումն է⁷:

Մեր կարծիքով դժվար է չհամաձայնել հեղինակների վերը հիշատակված կարծիքի հետ, ըստ որի փորձագետների իրավասությունը չի կարող դուրս գալ հիվանդության ախտորոշման և անձի վարքագծի վրա այդ հիվանդության ազդեցության սահմաններից՝ մանավանդ հիմք ընդունելով Վ.Ենգիբարյանի կողմից «հատուկ գիտելիքներ» եզրույթին հաղորդած բովանդակությունը, համաձայն որի «հատուկ գիտելիքների հասկացության բովանդակության մեջ պետք է մտնեն նյութական և դատավա-

⁵ Տե՛ս *Ենգիբարյան Վ., Դավթյան Լ., Չախոյան Ա.*, Դատական փորձագիտության տեսություն (Օագումնաբանությունը, արդի հիմնախնդիրները և կատարելագործման հեռանկարները) գիտական ձեռնարկ: Խմբ. Վ.Գ. Ենգիբարյան: Եր.: Անտարես, 2012. Էջ 31:

⁶ Տե՛ս *Аверьянов Т.В., Белкин Р.С., Корухов Ю.Г.* Судебная экспертиза в гражданском, арбитражном и уголовном процессе. М., 2003: Էջեր 5–7:

⁷ Տե՛ս *Треушников М.К.* Судебные доказательства. М., 2004: Էջեր 190–193:

րական իրավունքի գիտության շրջանակներից դուրս այն բոլոր գիտելիքները, որոնք անհրաժեշտ են ապացուցման գործընթացում դատական ապացույցների հետազոտման, ինչպես նաև այլ երևույթների ու փաստերի ուսումնասիրման, հետազոտման համար»⁸: Ասվածից հետևում է, որ քննարկվող հարցի կապակցությամբ փորձագետի հատուկ գիտելիքների շրջանակը ընդգրկում է միայն արարքը կատարելու պահին հոգեկան համապատասխան վիճակով պայմանավորված, անձի կողմից իր արարքի բնույթն ու նշանակությունը գիտակցելու կամ այդպիսին ղեկավարելու ընդունակության առկայությունը կամ բացակայությունը որոշելը, իսկ քանի որ, մեր համոզմամբ, մեղսունակության և անմեղսունակության հարցի լուծումը իրավաբանական բնույթ է կրում, ուստի այդ հետևության իրավական գնահատման հարցը պետք է թողնվի բացառապես քրեական վարույթն իրականացնող մարմիններին:

Վերը նշված խնդրի հետ սերտորեն առնչվում է նաև փորձագետի եզրակացության՝ քրեական գործով ձեռք բերված այլ ապացույցների հետ համակցության մեջ գնահատելու քրեադատավարական պահանջը:

Փորձագետի եզրակացության գնահատումը ենթադրում է կոնկրետ գործով վարույթն իրականացնող մարմնի մոտ ներքին համոզմունքի ձևավորում եզրակացության գիտական հիմնավորվածության և արժանահավատության, ինչպես նաև դրանում արված հետևությունների ապացուցողական նշանակության վերաբերյալ⁹:

Որոշ հեղինակներ առանձնացնում են փորձագետի եզրակացության գնահատման երկու չափանիշ՝

1. փորձագետի եզրակացության գիտական հիմնավորվածության, պատճառաբանվածության, նրա հետևությունների մանրամասն, բազմակողմանի և օբյեկտիվ ստուգում,

2. փորձագետի եզրակացության մեջ շարադրված փաստերի ապացուցողական նշանակության որոշում, գործով ձեռք

⁸ Տե՛ս *Ենգիբարյան Վ.Գ.*: Դատական փորձաքննությունների արդի հիմնախնդիրները: ԵՊՀ հրատ., Եր., 2007: Էջ 37:

⁹ Տե՛ս Судебно-почерковедческая экспертиза. // Под ред. Е.Д. Добровольская, А.И. Манцегова, В.Ф. Орлова. М., 1971, էջ 314:

բերված այլ ապացույցների հետ դրանց կապի և հարաբերության պարզում¹⁰:

Մեզ համար առավել հետաքրքրություն է ներկայացնում երկրորդ չափանիշի քննարկումը անձի մեղսունակության կամ անմեղսունակության հարցի լուծման համատեքստում: Միանգամայն հասկանալի է, որ այլ ապացույցների համակցությամբ փորձագետի եզրակացության գնահատումը միաժամանակ այդ ապացույցի արժանահավատության երաշխիք է: Միևնույն ժամանակ կարևոր է հստակեցնել այլ ապացույցների շարքում փորձագետի եզրակացության տեղն ու դերը, ինչպես նաև դրա ապացուցողական նշանակությունը կոնկրետ քրեական գործերով:

Այսպես, պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ անձի մեղսունակությունը կամ անմեղսունակությունը որոշելու հարցում փորձագետի եզրակացությունը վարույթն իրականացնող մարմինների կողմից կայացված փաստաթղթերում մշտապես ձեռք է բերում բացարձակ ապացուցողական նշանակության փաստաթղթի կարգավիճակ: Իհարկե, անհերքելի է, որ նշված հարցերի լուծումը անհնար է առանց այդ բնագավառում հատուկ մասնագիտական գիտելիքների տիրապետող անձի հետևության, այդուհանդերձ փաստ է, որ ի հակառակ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջների՝ քրեական վարույթն իրականացնող մարմինները շատ հաճախ անտեսում են այն դրույթը, որ փորձագետի եզրակացությունը նույնպես ապացույցի տեսակ է, չունի նախապես ապացուցողական նշանակություն, չի գտնվում որևէ առավելությունների շրջանակներում՝ ի համեմատ քրեական գործով ձեռք բերված այլ ապացույցների, և ենթակա է գնահատման քրեական գործով ձեռք բերված այլ ապացույցների հետ համակցության մեջ: Հակառակ մոտեցման դեպքում վարույթն իրականացնող մարմինների հետևությունները միշտ չէ, որ կարող են անվիճելի հավաստի լինել ու կհանգեցնեն դատավարական լրջագույն սխալների՝ բոլոր բացասական հետևանքներով:

¹⁰ См. у Судебно-почерковедческая экспертиза. // Под ред. Е.Д. Добровольская, А.И. Манцетова, В.Ф. Орлова. М., 1971, էջ 314:

Առկա է համընդանուր մոտեցում այն մասին, որ թեև փորձագետի եզրակացությունն ապացույցի մյուս տեսակների շարքում ունի որոշակի առավելություն, այնուամենայնիվ, դա հիմք չէ փորձագետի եզրակացությունը գնահատել որպես ապացույցի մյուս տեսակների նկատմամբ առավելություն ունեցող հատուկ, բացառիկ ապացույց: Մեր կարծիքով չի կարելի չհամաձայնել նման տեսակետի հետ, քանի որ անկախ նրանից, թե օրենսդրությամբ սահմանված ապացույցի տեսակներից որևէ մեկի արժանահավատությունը որոշակիորեն երաշխավորող առանձնահատկություններ ունի, թե՛ ոչ, (այս մասին է խոսում փորձաքննություն նշանակելու որոշման, փորձագիտական հետազոտության, փորձագետների դատավարական պարտականությունների, իրավունքների, նրանց տրված դատավարական երաշխիքների ամբողջությունը. սրանց նպատակն է գործող քրեական դատավարության օրենսդրության մեջ ընդգծել ապացույցի այդ տեսակի կազմման, ստացման և վարույթն իրականացնող մարմիններին ներկայացնելու հատուկ ընթացակարգերի սահմանները), այդուհանդերձ դա չի կարող ընդհանուր առմամբ որպես ապացույցին առավելություն տվող հանգամանք դիտվել: Կարծում ենք, որ յուրաքանչյուր ապացույցի արժեքը կարող է ի հայտ գալ միայն այլ ապացույցների համակցությամբ դրա գնահատման արդյունքում:

**ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՅԹՅՈՒՆԻ ՎԱՅՐՈՒՄ
ԱՍՓՈՓ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳՈՐԾՈՂ
ՈՒՂԵՑՈՒՅՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Հ. Ղուկասյան

ՀՀ Քննչական կոմիտե

Վերջին ժամանակներում առավել տարածուն բնույթ են կրում պայթուցիկ սարքերի կիրառմամբ և պայթուցիկ նյութերի օգտագործմամբ կատարվող հանցագործությունները, որոնք առանձնահատուկ են թե՛ իրենց քրեագիտական բնութագրմամբ և թե՛ դրանց քննության մեթոդական առանձնահատկություններով: Առանձնակի կարևորություն ունի նաև կրիմինալ և տեխնոգեն պայթյունների դիֆերենցումը հետագա գործառույթները ճիշտ կազմակերպելու տեսանկյունից: Քանի որ տվյալ դեպքում առավել կարևորվում է դեպքի վայրի զննությունը որպես առաջնային և անհետաձգելի քննչական գործողություն, անհրաժեշտություն է առաջացել ստեղծել ուղեցույց, որը ներառում է գործողությունների ինչպես ընդհանուր մոտեցումներ, այնպես էլ կոնկրետացնում է գործառույթները և տալիս դրանց կատարման նկարագրությունը: Ուղեցույցը մշակելիս հաշվի են առնվել լավագույն քրեագիտական ստորաբաժանումների տեսական և պրակտիկ փորձը ու Հանրապետությունում գործող քրեագիտական և փորձագիտական ստորաբաժանումների տեխնիկական և մասնագիտական պատրաստվածության աստիճանը՝ ինչպես դեպքի վայրում առաջնային վերլուծությունների պարագայում, այնպես էլ համապատասխան պայթյունատեխնիկական փորձաքննությունների նշանակման և դրանց կատարման ընթացքում:

Ուղեցույցը բաղկացած է հետևյալ չորս մասերից՝

1. քննչական խմբի առաջնային գործողությունները դեպքի /պայթյունի/ վայրում,

2. դեպքի /պայթյունի/ վայրի զննության սկզբնական փուլը,
3. դեպքի /պայթյունի/ վայրի մանրակրկիտ զննությունը,
4. դեպքի /պայթյունի/ վայրում առկա հետքերի ֆիքսումը և առգրավումը:

Առաջին մասում արծածված են քննչական խմբի առաջնային կազմակերպչական և պրոցեսուալ գործողությունները դեպքի /պայթյունի/ վայրում: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում աշխատանքների անվտանգության միջոցառումների ուժեղացմանը և դրանց խստագույն պահպանմանը հետագա գործառույթներն իրականացնելիս:

Ուղեցույցի երկրորդ մասն անդրադառնում է դեպքի վայրի անմիջական զննության սկզբնական գործառույթներին, որոնց թվում են դեպքի վայրի մոտավոր սահմանների որոշումը, մինչև դեպքի վայրում կատարվող փոփոխությունները, դրանց ֆիքսումը ֆոտո և տեսանկարահանման միջոցով՝ ճշգրտելով պայթյունի և դրա հետևանքների ամբողջական պատկերը: Առաջնային վերլուծությամբ պարզվում է դեպքի մեխանիզմը, որն ըստ գործողությունների զարգացման ենթակա է ճշգրտման: Տվյալ փուլում մասնագետների կողմից կատարվում են նաև առաջնային չափագրական և հաշվարկային հետազոտություններ:

Ուղեցույցի երրորդ մասը վերաբերում է պայթյունի օջախի մանրակրկիտ հետազոտությանը՝ դրանում կիրառվող մեթոդների նկարագրմամբ, միկրո օբյեկտների և հետքերի հայտնաբերմանը և ֆիքսմանը, համապատասխան նմուշառումների գործընթացներին: Որոշվում են նաև առգրավման ենթակա օբյեկտներն ըստ խմբերի: Զուգահեռ շարունակվում է վերլուծական աշխատանքը:

Չորրորդ մասը հստակեցնում է հետքերի և օբյեկտների ֆիքսմանն ու առգրավմանը զուգահեռ դրանց փաթեթավորման ճիշտ եղանակները: Զննության ամբողջ ընթացքում կարևորություն է տրվում դեպքի վայրում առկա օբյեկտների պատկերային ֆիքսմանը՝ լուսանկարահանման և տեսանկարահանման մեթոդների կիրառմամբ: Այստեղ հարկ է նշել վերջին շրջանում օգտագործվող սֆերիկ համայնապատկերային լուսանկարահանման եղանակը, որը մեծապես նպաստում է հետագա

բոլոր՝ ինչպես քննչական, այնպես էլ փորձագիտական անալիտիկ-վերլուծական աշխատանքների իրականացմանը:

Նշված ուղեցույցը հանդիսանում է աշխատանքները համակարգող և գործառույթներն ուղղորդող ձեռնարկ և, ըստ մասնագետների, արդյունավետ է համապատասխան աշխատանքներն իրականացնելիս: Ուղեցույցը նպաստում է նաև քննիչների ու քրեագետների տեսական գիտելիքների ձևավորմանն ու ամրապնդմանը:

ՓՈՐՉԱԳԵՏԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ԴԵՐՐ ԱՊԱՑՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Ա. Ֆանյան

ՀՀ քր. դատ. օր. 25-րդ հոդվածի 2-րդ մասը հստակ սահմանում է. «Քրեական դատավարությունում ոչ մի ապացույց նախապես հաստատված ապացույցի ուժ չունի: Դատավորը, ինչպես նաև հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը չպետք է կանխակալ մոտեցում ցուցաբերեն ապացույցներին, չպետք է դրանց որոշ մասին մյուսների նկատմամբ առավել կամ նվազ նշանակություն տան՝ մինչև դրանց հետազոտումը պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում»:

Ի հակառակ վերը նշված օրենսդրական պահանջի՝ գործնականում փորձագետի եզրակացությունը մեծամասամբ ունենում է քրեական գործի էլքը կանխորոշող «դոմինանտ» ապացույցի դեր:

Մեր կողմից խնդրո առարկայի շուրջ դատաիրավական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ քիչ չեն այն դեպքերը, երբ փորձագետի եզրակացությունը չի համապատասխանում գործով ձեռք բերված այլ ապացույցներին. ավելին՝ հակասում է դրանց, սակայն գործն ըստ էության լուծող վերջնական որոշումն այնուամենայնիվ արտացոլում է փորձագետի դիրքորոշումը: Կարծում ենք՝ պետք չէ անտեսել նաև այն փաստը, որ փորձագետի եզրակացության՝ այլ ապացույցների հետ համակցության մեջ գնահատելու առաջին հայացքից ֆորմալ թվացող պահանջի կատարումը թույլ կտա խուսափել ոչ միայն դատական սխալներից, այլ նաև հնարավոր կոռուպցիոն ռիսկերից:

Մեր կողմից կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այս բնագավառում փորձագիտական եզրակացությունները խիստ ուրվագծային են: Դրանցում արված հետևությունները մշտապես հենվում են փորձարկվողին առաջադրված

հարցերի պատասխանների և նրա ստացիոնար բուժ. հաստատությունում եղած ժամանակ ու փորձաքննության կատարման պահին նյարդահոգեկան վիճակի նկարագրության վրա: Եզրակացության տիպական ուրվագիծը ներառում է հիվանդության պատմությունը (անամնեզ), փորձաքննվողի նյարդաբանական ու հոգեբանական կարգավիճակը, իր բնավորության որոշ գծերի ցանկը, մտածողական ընդունակության (ինտելեկտի) մակարդակի գնահատականը և դրանում արված հետևությունները, որոնք առավելապես բխում են շփման ընթացքում նրա պահվածքի վերլուծությունից: Հիմնական ուշադրությունը հատկացվում է հոգեկան հիվանդության առկայության կամ բացակայության հիմնավորմանը: Դժվար է պատկերացնել, որ, միայն այս տվյալների հիման վրա և տվյալ մեթոդաբանությունից ելնելով, կարճատև ժամանակամիջոցում հնարավոր է ուսումնասիրել անձի հոգեկան վիճակն անցյալի կոնկրետ պահին, որը երբեմն փորձաքննությունն անցկացնելուց ամիսներ և նույնսկ տարիներ առաջ էր: Տպավորությունն այնպիսին է, թե անձի մեղսունակությունը կամ անմեղսունակությունը որոշվում է ըստ փորձաքննության ժամանակ փորձարկվողի դրսևորած վարքագծի, մինչդեռ փորձաքննության պահին նա կարող է ոչ մի հոգեկան հիվանդություն էլ չունենալ կամ հակառակը. արարքից հետո նրա մոտ կարող էր առաջանալ որևէ հոգեկան հիվանդագին շեղում: Իսկ ինչպես հայտնի է, անմեղսունակությունը որոշվում է հանրորեն վտանգավոր արարքը կատարելու պահով, այլ ոչ թե փորձաքննության ժամանակ փորձարկվողի հոգեկան վիճակով ու դրսևորած վարքով:

Հաշվի առնենք այն հանգամանքը, որ իբրև մեղսունակության բժշկական չափանիշ կարող է հանդես գալ անմեղսունակության բժշկական չափանիշի բովանդակությունը կազմող հոգեկան ցանկացած հիվանդություն կամ խանգարում, եթե այն արարքը կատարելու պահին չի ազդել անձի գիտակցական և կամային ոլորտների վրա. ուստի, փորձարկվողի մոտ հոգեկան որևէ հիվանդության կամ խանգարման առկայությունը դեռևս չի վկայում այն մասին, որ արարքը կատարելու պահին նա եղել է անմեղսունակ:

Վերն ասվածից էլ հենց բխում է քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից փորձագետի եզրակացության՝ իբրև բացարձակ առավելություն ունեցող ապացույցի դիտարկման «վտանգը»:

Անկախ նրանից, թե փորձագետի եզրակացությունը որոշակի բնագավառում կիրառված գիտելիքների արդյունքում ստացված՝ գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների վերաբերյալ տեղեկատվություն է, այնուամենայնիվ, հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը կամ դատարանը չեն կարող կանխակալ մոտեցում ցուցաբերել փորձագետի եզրակացությանը՝ որպես առավել կարևոր ապացույցի տեսակի¹:

Ս.Շիշկովի պնդմամբ. ««մեղսունակություն» և «անմեղսունակություն» հասկացությունները փորձագիտական եզրակացության մեջ ... չպետք է առկա լինեն»²: Հենց այդ տեսակետն էլ, ինչպես նա նշում է, թույլ է տալիս փորձագետներին մնալ իրենց մասնագիտական գիտելիքների սահմաններում:

Խնդիրը կայանում է նաև նրանում, որ եզրակացության մեջ ուղղակիորեն մեղսունակության կամ անմեղսունակության մասին մատնանշումը քրեական վարույթն իրականացնող մարմնի համար տվյալ ապացույցի նկատմամբ կանխակալ վերաբերմունքի ձևավորման հող կարող է ստեղծել: Դրա արդյունքը կարող է լինել այն, որ վերջինս, արդեն իր ձեռքի տակ ունենալով քրեական գործի ելքը կանխորոշող *իրավական գնահատական*, կարող է իրեն ազատել ապացույցները «ավելորդ» անգամ գնահատելու բեռից (ինչն էլ մշտապես տեղի է ունենում): Իբրև ասվածի հիմնավորում կարող ենք նշել այն, որ մեր կողմից տվյալ բնագավառում ուսումնասիրված որևէ քրեական գործում փորձագետի եզրակացությամբ արտահայտված հետևություններին չհամա-

¹ Տե՛ս *Ենգիբարյան Վ., Դավթյան Լ., Չախոյան Ս.*, Դատական փորձագիտության տեսություն (Ծագումնաբանությունը, արդի հիմնախնդիրները և կատարելագործման հեռանկարները) գիտական ձեռնարկ: Խմբ. Վ. Գ. Ենգիբարյան: Եր.: Անտարես, 2012. Էջ 183:

² Տե՛ս *Шушков С.* Понятия «вменяемость» и «невменяемость» в следственной, судебной и экспертной практике // Законность. 2001. № 2. Էջ 27:

պատասխանող վերջնական որոշում չի կայացվել: Քրեական վարույթն իրականացնող մարմինները մշտապես մեխանիկորեն համաձայնում են անձի մեղսունակության կամ անմեղսունակության մասին փորձագետի հետևությանը: Ասվածը չի նշանակում սակայն, որ քրեական վարույթն իրականացնող մարմինը կարող է պարզապես չհամաձայնել փորձագետի եզրակացությամբ շարադրված հետևություններին: Խոսքը վերաբերում է պատշաճ իրավական ընթացակարգով սահմանված կարգով՝ այլ սպացույցների հետ համադրման և գնահատման արդյունքում, տվյալ սպացույցին համապատասխան իրավական գնահատական տալուն:

Բացի այն, որ փորձագիտական եզրակացություններում, այնուամենայնիվ, առկա են «մեղսունակություն» և «անմեղսունակություն» հասկացությունները, պրակտիկ գործունեության մեջ քննիչներն անգամ դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու մասին որոշման մեջ փորձագետին առաջադրում են հետևյալ հարցերը. «փորձաքննությանը ներկայացված անձը մեղսունակ է, սահմանափակ մեղսունակ է, թե՞ անմեղսունակ»:

Քրեական վարույթն իրականացնող մարմինների կողմից փորձագետներին իրավաբանական բնույթի հարցեր առաջադրելու պրակտիկական տարածված է նաև այլ բնագավառներում. մասնավորապես հաճախ ենք հանդիպում հարցեր թղթադրամների, փաստաթղթերի, ստորագրության, գնման ակտերի կեղծված լինելու վերաբերյալ, ինչն էլ թույլ է տալիս փորձագետին դուրս գալ փորձաքննության առարկայի շրջանակներից, մտնել իրավաբանական բնույթի հարցերի տիրույթ և երևույթներին կամ փաստերին տալ իրավական գնահատականներ: Կարծում ենք՝ նման հարցադրումները հակասում են ՀՀ քր. դատ. օր. 85-րդ հոդվածի 3-րդ մասի բովանդակությանը, որում ուղղակի ասվում է, որ քրեական գործով վարույթին իրավաբանական հարցերով փորձագետ չի ներգրավվում:

«Անմեղսունակություն» կատեգորիայի իրավական բնույթն ընդգծելու համար, կարծում ենք, բավական է մատնանշել հետևյալ հատկանիշները. քրեական օրենսգրքի համաձայն՝ անմեղսունակությունը հանգեցնում է որոշակի իրավական

հետևանքների. բացառում է քրեական պատասխանատվությունն ու պատիժը և կարող է բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման հիմք ծառայել: Անձը կարող է անմեղսունակ ճանաչվել միայն կոնկրետ արարք կատարելու կապակցությամբ և քրեական պատասխանատվության հարցի լուծման նկատառումներով: Իսկ փորձագետը պետք է արտահայտի իր կարծիքը ոչ միայն այն մասին, թե արդյոք անձը հոգեկան խանգարում ունի, այլև այն մասին, թե ինչպես է արարքը կատարելու պահին այդ խանգարումն ազդել նրա ընդունակության վրա՝ գիտակցելու իր կատարած արարքի հանրային վտանգավորությունն ու սոցիալական նշանակությունը և ղեկավարելու իր գործողությունները (անգործությունը) և ոչ թե պարզապես մատնանշել հոգեկան հիվանդության առկայությունը: Կարծում ենք՝ առանց իրավաբանական չափանիշի հաստատման փորձագետի եզրակացությունը քրեական վարույթն իրականացնող մարմինների կողմից չի կարող օգտագործվել մեղսունակության կամ անմեղսունակության վերաբերյալ հետևություններ անելիս:

Մեր կարծիքով մեղսունակության կամ անմեղսունակության մասին փորձագիտական եզրակացության մեջ ուղղակի մատնանշումը փորձագետի իրավասության շրջանակներից դուրս է նաև այն պատճառով, որ նա իրավասու չէ հաստատելու սովյալ անձի կողմից հանրորեն վտանգավոր արարք կատարելու փաստն ու անմեղսունակության իրավաբանական այլ հատկանիշները: Միայն քրեական վարույթն իրականացնող մարմինները, բոլոր ապացույցները գնահատելով և գործով իրավաբանական նշանակություն ունեցող բոլոր փաստերը համադրելով, կարող են հանգել իրենց «տեսադաշտում» հայտնված անձի մեղսունակության կամ անմեղսունակության մասին հետևության: Փորձագետը պետք է միայն հաստատի անմեղսունակության բժշկական չափանիշի (հիվանդության) և իրավաբանական չափանիշի (որքանով է հիվանդությունն ազդել արարքի վտանգավորությունը գիտակցելու և իր գործողությունները (անգործությունը) ղեկավարելու ընդունակության վրա) առկայությունը, որն էլ հնարավորություն կտա իրավակիրառողին այդ

հետևությունները այլ ապացույցների հետ համադրելով ճիշտ և հիմնավորված որոշում կայացնել:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ նպատակահարմար ենք գտնում ընդգծել քրեական գործերով ապացուցման գործընթացում փորձագետի եզրակացության՝ իբրև ապացույցի առանցքային նշանակությունը՝ հաշվի առնելով այն, որ այդ փաստաթուղթը կազմվում է համապատասխան բնագավառում հատուկ գիտելիքներով օժտված անձի կողմից և ունի արժանահավատությունը երաշխավորող որոշակի հատկանիշներ: Անհերքելի է նաև, որ մեծաթիվ են այն քրեական գործերը, որոնցով ճշմարտության բացահայտման հարցում այս ապացույցը ունեցել է կարևոր, անգամ՝ վճռորոշ նշանակություն: Սակայն, նույնիսկ հաշվի առնելով այդ փաստաթղթի՝ քրեական դատավարության ընթացքում ունեցած դերն ու նշանակությունը, այն այլ ապացույցների նկատմամբ չպետք է դիտարկվի իբրև առավելություն ունեցող:

Ինչ մնում է փորձաքննության առարկային վերաբերող փորձագետի իրավասության սահմաններին, ապա դրանք չպետք է դուրս գան նրա հատուկ գիտելիքների շրջանակից, իսկ քրեական վարույթն իրականացնող մարմիններն իրավական գնահատականներ պարունակող հարցերի լուծումը չպետք է փոխանցեն քրեական դատավարության այլ սուբյեկտներին:

**Республиканская конференция
«Значение судебной экспертизы в борьбе с преступностью»**

Главный редактор – М.Э. Авакян

Корректор – Ш.Г. Мелик-Адамян

Корректор – Э.А. Рухкян

Компьютерная верстка – А.С. Бжикян

Адрес Редакции научных изданий
Российско-Армянского(Славянского) университета:
0051 РА, г. Ереван, ул .О.Эмина, 123
тел./факс (+374 10) 27-70-52 (внутр. 42-02)
e-mail: redaction.rau@gmail.com

Заказ № 4

Подписано к печати: 30.03.2015г.

Формат 60x84¹/₁₆. Бумага офсетная № 1.

Объем усл. 9.68 п.л. Тираж 200 экз.